Եթե կարդանք Բաղրամյան 26-ի տելեգրամյան ալիքը, ապա այն իսկապես կարող ենք անվանել ոչ բարեկամական: Հետո՞ ինչ, որ ոմանք մեզ չեն սիրում, ոմանք բարիդրացիական տրամադրություններ չունեն: Ի՞նչ անենք՝ խարխլե՞նք ԵԱՏՄ-ն, որովհետեւ Բաղրամյան 26 տելեգրամյան ալիքը մեր մասին վատ բաներ է գրում, դա հիմարություն է:

Կարդացեք՝ էջ 4

Մի օր դուրս է, չէ՞, գալիս եկեղեցուց, հենց դուրս է գալիս, գնացեք, եկեղեցուն տեր կանգնեք: Ես ուղղակի թարախավարի մի քանի ժամ կսպասեի, երբ Տեր Արամը, թե ով, դուրս գար, դեմը կառնեի: 3-4 հատ ջանավոր քահանա կուղարկեի՝ էն ջահելներից, որ կան, կասեի՝ գնացեք մտեք վանք, ու առը հա, թե էդտեղ կարար մեկը մտներ:

Կարդացեք՝ էջ 6

Երբ Հարությունովը ժամանեց Երեւան, նրան ապշեցրեց օդի ծայրահեղ աղտոտվածությունը: Իր պաշտոնավարման առաջին իսկ օրերին Երեւանի զարգացման գլխավոր հատակագիծը քննարկելիս, նրա նախաձեռնությամբ որոշում ընդունվեց սկսել Նորքի ջրանցքի կառուցումը, որը թույլ տվեց ինտենսիվ կանաչապատել Քանաքեռի ու Նորքի լանջերը:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 197 (4099), 5 դեկտեմբեր, ուրբաթ, 2025

www.hraparak.am

Ամենայն հայոց կաթողիկոսին գահընկեց անելու հարցը Փաշինյանի համար իդեաֆիքս է դարձել: Որոշ տեղեկություններով, նա անգամ արտերկրում հավատարմագրված ՀՀ դեսպաններին է հանձնարարական իջեցրել՝ աշխատանք տանել ՀԱԵ թեմական առաջնորդների հետ, փորձել նրանց ինչ-ինչ շահագրգռությունների դիմաց իշխանության կողմը բերել: Ասում են, որ ԱՄՆ Արեւմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի հետ բանակցություններն իրականացրել է ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Նարեկ Մկրտչյանը: Նրան խոստացել են կաթողիկոսի պաշտոնը: Հովնան արքեպիսկոպոսը Վեհափառի հրաժարականը պահանջող 10 ուխտադրուժ եպիսկոպոսներից է, նա նոյեմբերի 23-ին ընդունելության է արժանացրել Մկրտչյանին, ճոխ ընթրիքով պատվել դեսպանին: Խառնակչությունը, փաստորեն, դարձել է դիվանագիտական աշխատանքի մասը:

Աժ-ն երեկ առաջին ընթերցմամբ ընդունեց զինծառայությունը կես տարով կրճատելու մասին պաշտպանության նախարարության առաջարկը: Երբ հրատապ ճանաչված նախագիծն ընդունվի եւ ուժի մեջ մտնի, հունվարից բանակ զորակոչվող երիտասարդներն արդեն կծառայեն ոչ թե երկու տարի, այլ՝ մեկուկես: Չնայած ընդդիմադիրները քննադատեցին այս նախագիծը՝ ասելով, որ այն անվտանգային խնդիրների է հանգեցնելու, կրճատվելու է բանակի եւ, ըստ այդմ՝ սահման պահողների թիվը, սակայն ձեռնպահ քվեարկեցին՝ տուրք տալով պոպուլիզմին: Գաղտնիք չէ, որ պոպուլիստական այս նախագիծն ընտրություններից առաջ բերվել է՝ հանրության որոշ շերտերի համակրանքը շահելու համար, ուստի դեմ քվեարկել՝ հիմք ընդունելով պետության անվտանգությունը, կնշանակի դառնալ մի ստվար զանգվածի թշնամին. թերեւս այսպես է մտածել ընդդիմությունը:



Զգայային ագրարային համալսարանը 2021-ից գույքահարկի գծով պարտավորություն է կուտակել, որը կազմում է ավելի քան 600 միլիոն դրամ: Համալսարանի ռեկտորի պարտականությունները 2023թ. դեկտեմբերից կատարում է Հրաչյա Զաքոյանը: Մինչ այդ ռեկտորն էր Վարդան Ուռուտյանը, որը 2024 թ. հոկտեմբերին ԿԳՄՍ նախարարի որոշմամբ հայտնվեց հոգաբարձուների խորհրդի կազմում: Մինչ համալսարանի ղեկավարությունը տարիներ շարունակ ամենօրյա ռեժիմով թմբկահարում է «անկասելի առաջընթացի» ու «աննախադեպ բարեփոխումների» մասին, գույքահարկի պարտքն ու տույժերն օրական ավելանում են մի քանի հարյուր հազար դրամով:

Կես ժամում՝ 10 քրեական հոդված

Ամեն անգամ ապշում ես, թե ինչքան կարող է պետության առաջին դեմքն օրենքը չիմանալ, արհամարհել, որ այսպես անթաքույց, օրը ցերեկով տրորի այն ու վատ չզգա: Երեկ Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ հաստատեց, որ ինքն ապօրինություն է կատարում, խախտում է Սահմանադրությունը, գերազանցում է իր լիազորությունները: Ինչքան էլ բառախաղ անես, փորձես օգտագործել, որ ոչ թե հրահանգ, այլ հորդոր է եղել, ոչ թե կարգադրություն, այլ՝ առաջարկ, sms-ով աշխատանքից ազատելն օրենքի կոպիտ խախտում է: Ինչքան էլ փորձես արդարացնել ԱԱԾ-ն սեփական շահերիդ համար օգտագործելը եւ Գյումրիի քահանային ԱԱԾ աշխատակցի այցն ու Վեհափառի անունը չհնչեցնելու առաջարկը փորձես ներկայացնել որպես ԱԱԾ-ի կողմից վարչապետի անձի պահպանությանն ուղղված քայլ, խնդրանք, դա ակնհայտ ապօրինություն է, իրավասությունների գերազանցում, իրավապահ համակարգը քաղաքական նպատակներով օգտագործել: Ինչքան էլ հայտարարես, որ ոչ թե կաթողիկոսի հրաժարականն ես պահանջում եւ նոր ընտրություն, այլ ասել ես. ձեզ չկա՝ «ինքը պետք ա ըտեղից գնա», դա վարչապետի իրավասություններից դուրս քայլ է, Սահմանադրության ոտնահարում, քրեորեն պատժելի արարք: Ինչքան էլ անմեղ տեսքով հայտարարես, որ, այո՝ ես գնում եմ այն պատարագներին, որտեղ Վեհափառի անունը չի հնչում, եւ նախապես խնամի-ծանոթ-բարեկամ-կագեբեի աշխատող այցելում են տվյալ քահանաներին եւ «խնդրում»՝ պատարագի ժամանակ կզեղչե՞ք արդյոք կաթողիկոսի անունը, դա ադմինիստրատիվ լծակների, վարչապետի պաշտոնի ակնհայտ չարաշահում է եւ կրկին՝ քրեորեն պատժելի արարք: Իսկ այն, որ հայտարարում ես, թե կաթողիկոսն «օտարերկրյա հատուկ ծառայության լեյտենանտի» է ենթարկվում, դա պետք է ապացուցել, հակառակ դեպքում պետք է պատժվի նման բան ասողը՝ զրպարտության համար:

Ասուլիսից ընդամենը 2 օր անց, Եպիսկոպոսաց ժողովի շեմին ԱԱԾ-ն ձերբակալեց Մայր Աթոռի դիվանապետ Արշակ սրբազանին եւ դիմեց դատարան՝ կալանքի միջնորդությամբ, որը քննելու է տխրահռչակ դատավոր Մասիս Մելքոնյանը: Կալանավայրերում արդեն 4 սրբազան է նստած: Արշակ արքեպիսկոպոսին մեղադրում են «թմրանյութերի իրացման» հոդվածով, բայց անգամ մեղադրանքը դրա մասին չէ. իբրեւ թե 2018-ին կաթողիկոսի դեմ պայքարող ինչ-որ անձի ուսապարկում թմրանյութ են դրել՝ սրբազանի հանձնարարությամբ: Բայց ուշագրավն այն է, որ Նիկոլ Փաշինյանն ԱԱԾ-ն վերածել է քաղաքական գործիքի: ԱԱԾ են հրավիրվում սրբազաններ՝ «զրույցի», ԱԱԾ աշխատակիցն այցելում է քահանաներին՝ առաջարկում պատարագի ժամանակ չհնչեցնել Վեհափառի անունը: Օրերս ոչ արմատական ընդդիմադիրներից մեկը պատմեց, որ իր գրասենյակ է այցելել մի անձ, ներկայացել որպես «տվյալ տարածքի ԱԱԾ պատասխանատու» եւ «զրուցել» իր հետ:

ԴԻԼԻՋԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ ՆՈՐԻՑ ԿԱՐՈՂ ԵՆ ԲՌՆԿՎԵԼ

Դեկտեմբերի 3-ի կեսօրին Իջեւան-Դիլիջան միջպետական ավտոճանապարհի Գոշ տանող խաչմերուկից քիչ հեռու, Դիլիջան ճանապարհի վերեւի մասում անտառի գլխին ծխի մեծ ամպ էր կանգնած: Դիլիջանի բնակիչները մեզ հայտնեցին, որ հերթական անգամ Դիլիջանի աղբավայրն է այրվում: Այդքան մեծ ծախսեր արվեցին, ջանքեր գործադրվեցին, հրդեհը մարելու համար օգնության հասան անգամ վանաձորցի հրշեջները, որոնք ավտովթարի ենթարկվեցին, եւ զոհ ու վիրավորներ ունեցանք: Ի վերջո, մի կերպ մարեցին Դիլիջանի ազգային պարկի անտառներում բռնկված հրդեհի օջախները, հրդեհ, որը Տավուշի անտառներին, բուսական, կենդանական աշխարհին, շրջակա միջավայրին մեծ վնաս հասցրեց: Դիլիջանում դեռ անձրեւ, ձյուն չեն տեղում, չոր տերեւները՝ խաշամը, հեշտորեն կարող է նորից բռնկվել, եւ հիմա հարկավոր էր տասնապատիկ զգույշ լինել: Մինչդեռ Դիլիջանի աղբավայրն է վառվում, որից կարող է նոր՝ ավելի ուժեղ հրդեհ բռնկվել, քանի որ թեթեւ քամին, կեղանիները, թռչունները կրակը կարող են տարածել անտառներում: Սրան նպաստում է նաեւ այն, որ Դիլիջանի աղբավայրը ցանկապատված չէ, այնտեղ կովեր են արածում՝ սնվելով թունավոր նյութերով: Իսկ Դիլիջանի համայնքապետարանը միջոցներ չի ձեռնարկում աղբավայրը ցանկապատելու, հրդեհները բացառելու ուղղությամբ: Վերահսկող մարմիններն էլ, օրինակ՝ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը, չեն նկատում աղբավայրի ողբալի վիճակը:

ՆԱՎԱՍԱՐԴ ԿՃՈՅԱՆԸ ԴՐԱՆՈՎ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ ԱՆՑԱՎ ԵՎ ԴԱՐՁԻ ԵԿԱՎ

*«Հրապարակի» զրուցակիցը Հովհաննավանքի նախկին քահանա Տեր Արամն է՝ կարգալույծ արված **Ստեփան Ասատրյանը**:*

- Նիկոլ Փաշինյանն իր թիմակիցների հետ շարունակում է տարբեր եկեղեցիներ այցելել եւ պատարագների մասնակցել: Դուք չե՞ք մասնակցում այդ պատարագներին:

- Ես իմ եկեղեցում եմ իմ պատարագները մատուցում, իմ ժողովրդի հոգեւոր խնամքն եմ իրականացնում, դրա համար այլ տեղեր չեմ գնում:

- Այսինքն՝ պատարագներ մատուցում եք:

- Անշուշտ, այո: Քանի դեռ իմ ժողովուրդը պահանջ ու ցանկություն ունի իմ պատարագին մասնակցելու, ես պատարագելու եմ: Իմ ժողովուրդը՝ Փառք Տիրոջը, չի հրաժարվում, ես էլ կերակրում եմ իրենց:

- Ժողովուրդ ասելով ի՞նչ նկատի ունեք՝ միայն Օհանավան գյուղի բնակիչների՞ն:

- Ոչ միայն: Հովհաննավանք ոչ միայն օհանավանցիներն են գալիս, այլեւ հարակից գյուղերի ժողովուրդը, այստեղ են գալիս նաեւ Երեւանից:

- Իսկ վերջին իրադարձություններից հետո մարդկանց թիվը չի՞ պակասել:

- Ինձ կարգալույծ են արել, բայց իմ պատարագներին ավելի շատ մարդ է գալիս, քան թեմում կարգալույծ չեղած հոգեւորականների պատարագներին:

- Ինչո՞վ է դա պայմանավորված:

- Պայմանավորված է իրենց ճանաչելով, որովհետեւ մարդիկ հաշտ չեն, համերաշխ չեն եւ չեն ընդունում Մայր Աթոռի բարձրաստիճան հոգեւորականների որոշումները: Մարդիկ լավ գիտեն, թե ով է իրենց քահանան, ինչ տեսակի մարդ է:

- Մի քանի եպիսկոպոս դավաճանեցին եկեղեցուն եւ միացան իշխանություններին: Ինչպե՞ս եք նրանց քայլը գնահատում:

- Մի բան ասեմ՝ ոչ թե իշխանություններին են միացել եպիսկոպոսները, այլ՝ եկեղեցականները միացան եկեղեցուն: Դրանք տարբեր բաներ են, եւ շատ կարեւոր նախադեպ է, որ եկեղեցականը միանա իր եկեղեցուն, իր ժողովրդին: Երբ մենք խոսում ենք բարոյականությունից կամ անբարոյականությունից, ապա այս մարդիկ «ոչ» են ասել անբարոյականությանը, կապ չունի, թե անբարոյականությունը վերացնելու հարցով ով է իրենց ընդունել, նրանք միացել են եկեղեցուն:

- Բարոյականությունից եք խոսում, բայց Նավասարդ Կճոյանը, որն արժանացել է նույն Փաշինյանի եւ այլոց սուր քննադատություններին, այժմ ինչպե՞ս դարձավ բարոյական եւ դեռ մի բան էլ ինքն է մերժում անբարոյականությունը: Ասում էին՝ «Բենթլի» ունի, կոռուպցիոներ է, օֆշորում հաշիվներ ունի եւ այլն: Հիմա ի՞նչ փոխվեց:

- Ես կասեմ իմ տպավորությունները: Նա այդ ճանապարհով ապաշխարության ճանապարհ անցավ եւ ցույց տվեց, որ այլեւս չի ուզում իր եպիսկոպոսությունը շարունակել, եւ ինչ-որ մի պահի դարձի եկավ: Աստված միշտ էլ մեղավորի դարձն է ակնկալում: Եթե մեղավորն ընդունում է, որ ինքը մեղավոր է, ապա իմացած եղեք, որ Աստված սպասում է դրան եւ ուրախ է ընդունել մեղքերը: Ինչ է մեր ասածը, ասում ենք՝ ով մեղք է գործում, թող ընդունի իր մեղքը: Մեղք գործելը վատ բան է, մեղքի մեջ մնալն առավել վատ բան է:

- Ո՞վ է անմեղ: Կամ աշխարհում անմեղ մարդ:

- Ոչ թե ասեք՝ ով է անմեղ, այլ ասեք՝ ո՞վ կցանկանա դառնալ անմեղ: Իսկ ես այդ հարցին կպատասխանեմ հետեւյալ կերպ՝ այն մարդը, ով մեղքին կասի «ոչ»: Նա, ով չի հարմարվի մեղքի հետ. ես այդպես կասեի: Անմեղ է նա, ով արդար է: Ով արդար չէ, ուրեմն իր տակը մեղք ունի, նա, ով կուզի Աստծով արդարանա, նա առաջին հերթին պետք է մեղքերից հրաժարվի: Եթե Նավասարդ սրբազանը որոշել է այդ ճանապարհով անցնել, ես նրան շնորհավորում եմ, շնորհավորում եմ նաեւ մեր եկեղեցուն:

- Այդ եպիսկոպոսների հայտարարությունից տպավորություն ստեղծվեց, որ կաթողիկոսն այնքան անմեղ է, որ նրա միակ մեղքն Արշակ սրբազանին սատարելն է:

- Իմ կարգալուծությունը, Տեր Թադեի եւ Տեր Տարոնի կարգալուծությունը նրա համար էր, որ իբրեւ վարկաբեկել ենք եկեղեցու հեղինակությունը: Թե ինչով ենք վարկաբեկել, դա դնում ենք մի կողմ, բայց մեզ փաստացի դրանում են մեղադրում: Այդ հայտարարությունից տպավորություն ենք ստանում, որ եկեղեցու հեղինակությունն իրենց համար խիստ կարեւոր է, այդ դեպքում ինչպե՞ս է ստացվում, որ մենք, չանելով այն, ինչ արել է Արշակ սրբազանը, կարգալույծ ենք լինում, իսկ նա՝ ոչ: Հ1-ի եթերից խոսելն է հեղինակազրկում եկեղեցին, թե՞ պղծության մեջ լինելը: Եկեք նժարին դնենք:

- Ինքը՝ Արշակ սրբազանն ասում է, որ այդ տեսանյութերը կեղծ են:

- Բայց իր հարցազրույցի ժամանակ էլ ասում էր՝ եթե ինձ կարգալույծ անեք, ինձ հնարավորություն կտաք, որ էլի նման մեղքեր գործեմ: Այսինքն՝ նա ընդունեց, որ նման մեղք է գործել: Նա հանրությանը սպառնաց:

- Ոչ՝ ուզում էր ասել. եթե նման կյանքով ապրող լինեի, ուրախ կլինեի, որ ինձ կարգալույծ են անում, այդ դեպքում ավելի ազատ կյանքով կապրեի:

- Նույն տրամաբանությամբ՝ մեզ էլ չպետք է կարգալույծ անեին: Նա նպաստել է մեր կարգալուծությանը, նա հող է նախապատրաստել, որ մենք էլ գնանք սխալների ճանապարհով:

- Ինչո՞ւ հայտարարությամբ հանդես եկող եպիսկոպոսներին էլ կարգալույծ չեն անում՝ ըստ Ձեզ:

- Մեր հանգամանքները տարբեր են: Ես քահանա եմ, իրենք՝ եպիսկոպոս, արքեպիսկոպոս են, իրենց անցած ճանապարհը ծավալուն է, ծանրակշիռ, իրենց կարգալույծ անելն այդքան էլ հեշտ չէ, եւ հետո՝ կարգալույծ անողը՝ Արշակ սրբազանը, նրանցից մի քանիսի հետ հավասար հարթության վրա է: Օրինակ՝ Նավասարդ սրբազանն ավելի երկար ճանապարհ է անցել, քան Արշակ սրբազանը: Այս պարագայում դժվար է որոշումներ կայացնելը՝ հավասարը հավասարին, բայց քանի որ իրենք հատուկ վերաբերմունք են ունեցել քահանաների նկատմամբ, միշտ էլ քահանաներին վերեւից են նայել ու մտածել են՝ հեշտությամբ կտշենք:

- Քահանային եւ եպիսկոպոսին կարգալույծ անելու պրոցեսը նո՞ւյնն է:

- Շնորհների պաշտպան եւ կարգապահական հանձնախումբը դեռ պետք է հասկանալ՝ խորհրդատվակա՞ն կառույց է, թե՞ իրավական: Այսինքն՝ այդ կառույցը կաթողիկոսին խորհրդուրդ պետք է տա՞, թե՞ իրավասու է որոշումներ կայացնելու: Այդ կառույցը պետք չէ գերագնահատել: Կաթողիկոսն այդ կառույցին չի տվել նման հնարավորություն, մենք հիմա նրանց տալով նման հնարավորություններ, մեծ արտոնություն ենք տալիս, սակայն իրականում որոշումներ կայացնողն Ամենայն հայոց կաթողիկոսն է: Մնացածը ֆիկտիվ նպատակներով է: Քանի որ բոլոր կարգալուծությունների հեղինակը կաթողիկոսն էր, ստեղծեց մի մարմին՝ իբրեւ այդ առաքելությունը կատարելու համար, սակայն իրականում դա անում է բացառապես կաթողիկոսը: Եթե ինձ կարգալույծ արած լիներ հանձնախումբը, ապա դրա կազմում կար Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը, որը դեմ է եղել իմ կարգալուծությանը: Այդ ինչպե՞ս եղավ, որ հանձնախմբի մեջ կար տարաձայնություն, սակայն եղավ իմ կարգալուծությունը:

- Չունե՞ք մտավախություն, որ մի օր իրավապահները Ձեզ տարածքից կհեռացնեն, քանի որ այդ տարածքը պատկանում է Մայր Աթոռին:

- Բախում չեն սկսի, չեն հրահրի ժողովրդի եւ իրավապահների միջեւ:

- Վստա՞հ եք, որ ժողովուրդը կանգնելու է Ձեր կողքին:

- Միանշանակ: Այնքան մարդ կկանգնի իմ կողքին, որ այդքան մարդ երբեք իրենց կողքին չի կանգնել: Իրենց եւ իմ տարբերությունը հենց դրանում է կայանում: Իմ կողքին կա ժողովուրդ: Իրենց հույսը միշտ իշխանությունն է եղել, հիմա ո՛չ իշխանություն կա իրենց կողքին, ո՛չ էլ ժողովուրդ:

- Ինչո՞ւ Փաշինյանն էլ չի գալիս Հովհաննավանք:

- Ամեն տեղ էլ կարող է գնալ, ոչ մի խանգարող հանգամանք չկա: Հավատացեք, ինձ այստեղից հեռացնելու փորձեր եղել են, եւ տեսել են դրա պատասխանը: Եթե էլի անեն, էլի կստանան:

- Դե պարզ է՝ ոստիկանությունը պահպանում է Ձեզ: Իսկ հոգեւորականներից այժմ ո՞վ կա այդ տարածքում՝ Ձեզնից բացի:

- Միայն ես եմ, մյուս հոգեւորականներին խորհուրդ կտամ՝ գնան, իրենց հոտի կողքին կանգնեն, չլքեն, որը չթողնեն իրենց հոտի անդամներին:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՔՊ-Ի ԿԵՐՈՒԽՈՒՄԻ ԳՈՐԾԸ ՉՐՎԵՑ

«Հրապարակ»-ի տեղեկություններով՝ Հակակոռուպցիոն կոմիտեում կարճվելու է Վաղարշապատի ընտրություններից առաջ՝ հոկտեմբերի 21-ին, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մի շարք թեկնածուների կողմից «բարեգործական միջոցառման» վերաբերյալ հարուցված քրեական վարույթը, որը ոչ այլ ինչ էր, քան նախընտրական կաշառք եւ Ընտրական օրենսգրքի ոտնահարում: Ավելին, տեւական ժամանակ այս գործը Հակակոռուպցիոն կոմիտեում, կարելի է ասել, չի էլ քննվել. ո՛չ հարցաքննվողներ են եղել, ո՛չ էլ որեւէ մեկը կարգավիճակ է ունեցել:

Էջմիածնում ՔՊ-ի առերեւույթ խախտումների առթիվ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն դիմել էր դատախազություն: ՀԿ-ն իր դիմումում նշել էր, որ միջոցառման ժամանակ համայնքի բազմաթիվ բնակիչների տրվել են արժեքավոր նվերներ: Նվերները փոխանցողների թվում նաեւ ՔՊ կուսակցության ավագանու անդամի թեկնածու է եղել (հարթակում կանգնելու միջոցով): Նշվածը առերեւույթ պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածով արգելված արարք, այն է՝ ընտրությունների նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ արդյունքների ամփոփումը թեկնածուի, կուսակցության անդամի կողմից անձամբ կամ նրանց (այդ թվում՝ կուսակցության կամ դաշինքի) անունից, կամ որեւէ այլ եղանակով, կամ բարեգործության անվան տակ ընտրողներին անհատույց դրամ, սննդամթերք, արժեթուղթ, ապրանք տալը կամ բարեգործության հետ միաժամանակ նախընտրական քարոզչություն իրականացնելը:

Այս դեպքի լուսաբանումը մեծ աղմուկ էր բարձրացրել, եւ իրավապահները չէին կարողացել աչք փակել դրա վրա՝ մի ձեւական վարույթ էին հարուցել:

Հակակոռուպցիոն կոմիտեից մեզ փոխանցել էին, որ տեղի ունեցածով նախաձեռնվել է քրեական վարույթ. «Բարեգործության արգելքը խախտելու դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ: Քրեական վարույթը նախաձեռնվել է ՀՀ քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածի հատկանիշներով (Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը)»:

Երեկ Հակակոռուպցիոն կոմիտեից մեր հարցը, թե վարույթն ինչ փուլում է, չմեկնաբանեցին: Մեր աղբյուրներից տեղեկացանք, որ վարույթը կարճվել է՝ առանց որեւէ հետեւանքների: Հիշեցնենք, որ այս պահին անգամ վարույթներ են ընթանում 2017 թվականի ընտրությունների հետ կապված՝ ԲՀԿ-ի առնչությամբ, իսկ ընդամենը մեկ ամիս առաջ տեղի ունեցած խախտումն այլեւս քննության առարկա չէ ՔՊ-ական իշխանությունների կողմից:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Դիլիջանի համայնքապետին հողամասի՞ պատճառով են ծեծել

Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի ու նույն համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական ղեկավար Վախթանգ Թամրազյանի միջեւ ծեծկռտուքից հետո Թամրազյանի բջջային հեռախոսը շարունակում է մնալ անհասանելի: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքն ասում է, որ Թամրազյանը շարունակում է պաշտոնավարել որպես Թեղուտի վարչական ղեկավար: Ոստիկանությունից էլ հայտնում են, որ նման ահազանգ ու վարույթ իրենց մոտ չկա: Բայց Թեղուտ գյուղի բնակիչները հայտնում են, որ Դիլիջանի համայնքապետարանում սկսված, ապա Թեղուտ գյուղի տարածքում գտնվող «Սպոյի օբյեկտ» ռեստորանում շարունակված կռվի իրական պատճառը ոչ թե այն է, որ Վախթանգ Թամրազյանը վրդովվել է համայնքի «արու» ղեկավարի՝ իր հանդեպ անհարգալից պահվածքի պատճառով, այլ՝ այն, որ համայնքապետը ցանկացել է Թեղուտում ինչ-որ հողամաս վաճառել, որին Թեղուտի վարչական ղեկավարը դեմ է եղել: Դիլիջանի համայնքապետարանի կայքում Թեղուտ գյուղի հողերի վերաբերյալ բազում որոշումներ կան՝ համայնքապետի կողմից կայացված: Այլ մանրամասներ ճշտել մեզ չհաջողվեց:

ԻՆՉ ԿՈՄՊՐՈՄԱՏՈՎ ԵՆ ԾՆԿԻ ԲԵՐԵԼ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

ՀԵՏԱԳԾԻՐ

Նիկոլ Փաշինյանին միացած 10 ուխտադրուժ, տիրադավ եպիսկոպոսների շարքում հատկապես անհասկանալի ու զազրելի էր Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի պահվածքը. շատերն են հետաքրքրված՝ այդ ի՞նչ աշխարհացունց կոմպրոմատ են դրել եպիսկոպոսի առաջ, որ անկարող է եղել մերժել Արցախը հանձնած Նիկոլ Փաշինյանի մեկնած ձեռքը, ուրացել է հայրենիքը, միացել հայրենավաճառ խմբակին եւ դուրս եկել Վեհափառի ու Հայ առաքելական եկեղեցու դեմ:

Գաղտնիք չէ, որ Փաշինյանին միացած բոլոր ուխտադրուժների դեմ աշխատել է ԱԱԾ-ն եւ նրանց շանտաժի ենթարկել. մեկին՝ ընտանիք ունենալու, մյուսին՝ ոչ ավանդական սեռական կողմնորոշման, երրորդին՝ բիզնեսների համար: Իհարկե, Մայր Աթոռին հավատարիմ հոգեւոր դասը կարծում է, որ դրանք արդարացում չեն, ի վերջո, եթե անգամ այդ մեղադրանքների մի մասն իրական է, ապա չի կարելի ենթարկվել շանտաժի, ինչպես չեն ենթարկվում Վեհափառն ու Արշակ սրբազանը, էլի շատ ու շատ հոգեւորականներ: Այդուհանդերձ, մինչ օրս անհայտ է, թե ինչով են ծնկի բերել Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանին: Ի տարբերություն մյուս հոգեւորականների, նրա մասին որեւէ ինֆորմացիոն արտահոսք առայսօր չի եղել, ուստի նրան ճանաչողները տարակուսած են:

Մեզ պատմել են, որ հոգեւոր առաջնորդն իրականում չնչին գրոշներով վաճառված միակ հոգեւորականն է այդ շարքում, որի դեմ առանձնապես ոչ սեռական, ոչ նմանատիպ կոմպրոմատ չի դրվել: Մինչեւ Արցախի թեմի առաջնորդ նշանակվելը՝ 2021 թվականի հունվարի 21-ը, Վրթանես եպիսկոպոսը եղել է զինված ուժերի հոգեւոր առաջնորդը: Նա այդ պաշտոնում նշանակվել է 2007 թ. հոկտեմբերի 1-ին եւ իր գործունեության ընթացքում ի պաշտոնե բնակարան է ստացել զինված ուժերից: Թե որ թվականներին, մեզ չհաջողվեց ճշտել: Եկեղեցական արշավի ընթացքում Արցախի թեմի առաջնորդին սպառնացել են, որ կզրկեն այդ բնակարանից, իբր ինչ-ինչ թղթաբանական թերություններ են ներկայացրել, որ բնակարանն իրեն չի էլ պատկանում, թեմի առաջնորդն էլ ընդունել է Փաշինյանի «կրոնը», որ կացարանից չզրկվի:

Սակայն երեկ մեզ ասացին, որ արդեն քանի օր է՝ Վրթանես եպիսկոպոսն ընդհատակ է անցել, ընկճված է, որեւէ մեկի հետ չի շփվում, չի պատասխանում զանգերին: Ողջ արցախահայությունը եւ մեծ թվով մարդիկ նրան անարգանքի սյունին գամեցին, սակայն, ասում են, հատկապես ազդվել է քրոջ ամոթանքից, որի որդին 44-օրյա պատերազմում զոհվել է: Մեզ պատմեցին նաեւ, որ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպման հաջորդ օրը, երբ թեմի հոգաբարձուների խորհրդի անդամները գնացել են առաջնորդարան՝ թեմի առաջնորդից հաշիվ պահանջելու եւ նիստ գումարելու, որ դիմեն Վեհափառին՝ Վրթանես եպիսկոպոսին առաջնորդությունից զրկելու համար, նա սկսել է գոռգոռալ, թե՝ նիստ անելու իրավունք չունեք, ես եմ նիստ գումարողը, բայց երբ արժանացել է ատենակալների քամահրանքին ու դիմադրությանը, հանձնվել է՝ թողել հեռացել:

Հիշեցնենք, որ նախօրեին Արցախի թեմական խորհուրդը հայտարարությամբ հանդես եկավ՝ հայտնելով իր խոր անհանգստությունն ու մտահոգությունը. «Բազմաթիվ արցախցիների մոտ այս քայլն առաջացրել է զայրույթ, վրդովմունք եւ անվստահություն, ինչը մենք լիովին հասկանալի ենք համարում: Այս կապակցությամբ հանդիպել ենք Արցախի թեմի առաջնորդի հետ ու լսել նրա տեսակետն ու մեկնաբանությունները: Պետք է հստակ արձանագրենք, որ չենք կարող կիսել եւ դատապարտում ենք այդ մոտեցումները, քանի որ դրանք չեն արտացոլում Արցախի ժողովրդի դիրքորոշումն ու սպասումները»:

Մենք տեղեկացանք, որ խորհուրդը դիմել է Մայր Աթոռ եւ ակնկալում է, որ դեկտեմբերի 10-12-ը սպասվող Եպիսկոպոսաց ժողովի ժամանակ գահընկեց, անգամ կարգալույծ կանեն Արցախի թեմի առաջնորդին: Ի դեպ, Արցախի հոգեւոր թեմում եպիսկոպոսի կոչում ունեցող այլ հոգեւորական չկա, եթե գահընկեց անեն Վրթանես եպիսկոպոսին, ապա տեղապահ պետք է նշանակվի:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԱՌԱՅՍՕՐ 2 ԿԵՏԻՑ ԵՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼ՝ ԵՄ-ԻՑ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻՑ

Զրարատ Միրզոյանը Բրյուսելում ԵՄ պաշտոնյաների հետ նոր համագործակցության փաստաթուղթ է ստորագրել, որի առանցքային կետերից մեկն այն է, որ ԵՄ-ն 15 միլիոն եվրո է հատկացնելու ՀՀ-ին, հիմնականում՝ հակառուսական քարոզչության համար: Միրզոյանը նախ հանդիպել է ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսի հետ, որը հայտարարել է, թե Ռուսաստանն ու իր արբանյակները, ԱԺ ընտրություններին ընդառաջ, Հայաստանում ապատեղեկատվական արշավ են իրականացնում, եւ այդ մարտահրավերը հաղթահարելու համար 15 միլիոն եվրո է տրամադրվելու: «Մենք տեսնում ենք նույն ցանցերը, որ օգտագործվել են Մոլդովայում, այսինքն՝ սցենարը նույնն է, ԵՄ ֆինանսավորումը կօգնի հայտնաբերել ու արձագանքել նման ազդեցություններին»,- ասել է ԵՄ դիվանագիտության ղեկավար Կայա Կալլասը՝ նշելով, որ այդ գումարն ուղղվելու է խաղաղությանը եւ ավելի դիմակայուն Հայաստանին: Արեւմուտքն արդեն անթաքույց հայտարարում է, որ մտադիր է աջակցել ՔՊ-ի վերարտադրությանը՝ կիրառելով Մոլդովայի սցենարը եւ փորձելով ընտրական մանիպուլյացիաներով ամրագրել Փաշինյանի հաղթանակը: ՔՊ-ականներն արդեն փորձի փոխանակում են անում Մոլդովայի գործընկերների հետ: ՔՊ քարոզչական գծի պատասխանատու Վահագն Ալեքսանյանն է Մոլդովայում: Երեկ նա տեղեկացրեց, որ Մոլդովայի խորհրդարանում արդյունավետ քննարկում է ունեցել փոխնախագահ Դոյնա Գերմանի հետ: «Քննարկեցինք հիբրիդային սպառնալիքների նկատմամբ դիմակայունության ամրապնդման ուղղությամբ համագործակցության հնարավորությունները»: Ասում են նաեւ, որ Փաշինյանի վերջին հայտարարությունը եւս, թե էթիկայի կանոնագիրք են ընդունել եւ որոշել են, որ այլեւս չեն հայհոյելու, Եվրամիության պահանջից է բխում: ԵՄ տարբեր շրջանակներում շատ վատ են վերաբերվել Փաշինյանի՝ «դոմփելու», իր սեռական օրգանը ցուցադրելու մասին գրառումներին, որոնք մեծ տարածում են գտել միջազգային մամուլում: Եվ ԵՄ-ից նրան խիստ նկատողություն են հայտնել ու զգուշացրել, որ բարեվարքության տարրական կողմը պետք է պահի: Բայց կարող է ռեալ գործողություններով պայքարել ընդդիմադիրների դեմ, դրան չեն խանգարի: Թեմայի մասին «Հրապարակը» զրուցել է քաղաքագետ **Արմեն Բաղդասարյանի** հետ:

- Ինչ նախադեպ է սա, ինչ է նշանակում՝ պայքարել կեղծիքի դեմ, այն դեպքում, երբ մեզանում ամենաշատ կեղծիք տարածողն իշխանությունն է՝ իր սունկ կայքերով եւ հայտնի ֆեյքերի ՊՈԱԿ-ով: ԵՄ-ն այս քայլով, փաստորեն, իր բացահայտ աջակցությունն է հայտնում Փաշինյանին, այնպես, ինչպես Կայա Կալլասի դեպքում եղավ:

- Որքանով ես տեղյակ եմ եղել, կոնկրետ ՌԴ-ի անուն չեն հնչեցրել, սակայն, իհարկե, ԵՄ-ն այս քայլով բացահայտ աջակցություն է հայտնում Հայաստանի իշխանություններին, ինչը ես համարում եմ խիստ անթույլատրելի: Այն բացահայտ ու անմիջական ազդեցություն է Հայաստանի ներքին հարցերին, ինչը չի կարող լինել ընդունելի: Ես կխնդրեի ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ առայսօր միայն երկու կետից է, որ Հայաստանի իշխանություններին աջակցություն են հայտնել՝ ԵՄ-ից եւ Ադրբեջանից: Նշվել է, որ Հայաստանի գործող իշխանություններին տալիս են նախընտրական առավելություն: Ինչ վերաբերում է Մոլդովային, ապա, այո, Հայաստանի իշխանություններին խորհուրդ են տալիս Մոլդովայի օրինակով արգելել այն կուսակցությունների մասնակցությունն ընտրություններին, որոնք, իրենց բնորոշմամբ՝ ազդեցության գործակալներ են, ենթադրաբար՝ ՌԴ-ից: Հանդես գալով որպես դեմոկրատիայի աջակից եւ դրոշակակիր՝ Եվրոպան, այնուամենայնիվ, աջակցություն է հայտնում մի իշխանության, որը եթե այս ընտրություններն էլ հաղթի, կնշանակի, որ Փաշինյանը Հայաստանում իշխանության է 13 տարի: Այն դեպքում, երբ արեւմտյան քաղաքակիրթ եւ ժողովրդավարական երկրներում ընդունված չէ երկու ժամկետից ավելի պաշտոնավարել: Ավելին՝ ընդունված է համարել, որ եթե ինչ-որ մի ուժ երկու ժամկետից ավելի պաշտոնավարում է, ուրեմն այն ավտորիտար համակարգ է: Փաստացի, ԵՄ-ն աջակցում է մի ուժի, որի շնորհիվ մենք առաջին անգամ ունենալու ենք մի դեպք, երբ պետության փաստացի ղեկավարն իշխանավարում է տասը տարուց ավելի:

- 15 միլիոնը, որ տրամադրում են կեղծիքի դեմ պայքարում, ինչի՞ վրա են ծախսելու, Ձեր կարծիքով, եթե հաշվի առնենք, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանության չափ կեղծիք տարածող չկա:

- Իշխանությունը քարոզչական լուրջ ռեսուրսներ է ծախսում, այդ թվում՝ պետական: Ֆեյքեր են պահում՝ ահռելի թվերով, եւ, իրենց ասելով՝ ազդեցության գործակալների դեմ են պայքարում: Այդ ամենն արվել է մեր հարկերի հաշվին, սակայն այժմ օգնության է եկել ԵՄ-ն, որին նույնպես այդ քարոզչությունը ձեռնտու է: Նրանց՝ բոլորի հիմնական խնդիրը ՌԴ-ին տարածաշրջանից դուրս մղելն է: Հետեւաբար, պետք է վճարեն այդ փոքրիկ գումարը: Նման մեծ ծրագրի համար այն փոքրիկ գումար է. ֆեյքեր, ֆեյքերի ՊՈԱԿ-ներ, սունկ կայքեր եւ այլն:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՄ

ՄԻ ԱՆԳԱՄ ԱՍՎԵՑ՝ ԵՐԲ ԵՄ-ԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՕՐԵՆՔ ԸՆԴՈՒՆԵՑԻՔ, ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ՝ ԵՐԲ «ԹՐԱՄՓԻ ՈՒՂՈՒ» ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԵՑԻՔ

Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (ՄԳԻՄՕ) ավագ գիտաշխատող **Նիկոլայ Սիլաեւի** հետ զրուցել ենք Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների եւ տարածաշրջանում Ռուսաստանի ներկայության մասին:

- Որոշ քաղաքագետների մոտ տպավորություն կա, որ ՀՀ իշխանությունների այս քայլերը՝ ՀԱՊԿ-ի նիստերին չմասնակցելը, ամենուր ռուսական գործակալներ փնտրելը, կարող են բերել մի կետի, երբ Ռուսաստանը Հայաստանին դիտարկի որպես թշնամի երկիր, ու դրան հետեւեն կոնկրետ քայլեր:

- Տեսեք, եթե կարդանք Բաղրամյան 26 տելեգրամյան ալիքը, ապա այդ ալիքն իսկապես կարող ենք անվանել ոչ բարեկամական, չգիտեմ՝ երկրի մասով ոնց, բայց այդ ալիքը՝ հաստատ: Հետո՞ ինչ, որ ոմանք մեզ չեն սիրում, հետո՞ ինչ, որ ոմանք այնքան էլ բարիդրացիական տրամադրություններ չունեն: Մեզ պարտավորեցնող իրավական համաձայնագրեր կան, ես նույնիսկ չեմ խոսում ԵԱՏՄ-ի կամ ռուսական ռազմաբազայի մասին: Ի՞նչ անենք՝ խարխլե՞նք ԵԱՏՄ-ն, որովհետեւ Բաղրամյան 26 տելեգրամյան ալիքը մեր մասին վատ բաներ է գրում, ախր, դա հիմարություն է, դա անհամատեղելի է:

- Հաշվի առնելով Հայաստանի եւ Ռուսաստանի ներկայիս լարված, իսկ որոշ փորձագետների դիտարկմամբ՝ ճգնաժամային վիճակը, Ռուսաստանը կարո՞ղ է դիմել կոշտ քայլերի:

- Դա կախված է Հայաստանի կողմից արվող քայլերից, կարծում եմ, որ 2022 թվականի աշնան ու 2025 թվականի սկզբի միջեւ ինչ-որ տեղ Հայաստանում լրջորեն կարծում էին, որ Հայաստանը կընդունեն Եվրամիության ու ՆԱՏՕ-ի կազմ, կամ ինչ-որ այլ ձեւաչափով Արեւմուտքն անվտանգության երաշխիք կտրամադրի: Դա տեղի չունեցավ, պարզվեց, որ Արեւմուտքն ունի սեփական խնդիրները եւ Հայաստանին որեւէ լավություն չի անելու: Այդ պահից սկսած, ինձ թվում է՝ գնում են մի տեսակ անորոշ, անհետեւողական որոնումներ՝ Ռուսաստանի հետ հարաբերությունները վերականգնելու ուղղությամբ: Ամեն դեպքում, ռուսական կողմից նման մտադրություն հաստատ կա: Մինիմում երկու դրվագ եղավ, երբ Մոսկվայից խոսում էին այն մասին, որ պաշտոնական Երեւանն ինչ-որ բան այն չի անում: Մեկ անգամ դա եղավ ավելի ուղիղ տեսքով՝ Օվերչուկի կողմից, երբ Հայաստանում ընդունում էին Եվրամիությանը միանալու մասին օրենքը, իսկ երկրորդ անգամ՝ ավելի փափուկ եւ անուղղակի ձեւով, երբ Վաշինգտոնում պայմանավորվեցին բացել «Թրամփի ուղին»: Այդ ժամանակ ռուսական ԱԳՆ-ից նրբանկատորեն հիշեցրին, որ որտեղ պատրաստվում են բացել այդ ճանապարհը, այդտեղով անցնում է ԵԱՏՄ-ի մաքսային արտաքին սահմանը, եւ դա պետք է ուշադրության առնել: Մյուս հանգամանքը, որ վերջերս եղավ, ռուսական ոսկու՝ Հայաստանի միջոցով ռեէքսպորտի կտրուկ կրճատումն էր, ինչը, իհարկե, ոչ թե շուկայական մեխանիզմների պատճառով եղավ, այլ՝ լրիվ այլ պատճառներով: Քանի որ դա Ռուսաստանի համար տնտեսական օգուտ էր, դրա համար էլ այդ ռեէքսպորտը կրճատվեց: Թե չէ՝ ճնշում գործադրել Եվրամիությանը միանալու գործընթացի մասով, որի անդամ Հայաստանը չի հանդիսանում, կամ «Թրամփի ուղու» հետ կապված, որի հետ կապված ամեն ինչ այնքան անորոշ է, որ այդ մասին դեռեւս իմաստ էլ չկա քննարկում անել: Բայց եթե ԵԱՏՄ-ի մաքսային արտաքին սահմանը խախտվի, ապա մաքսային պաշտպանության այլ մեխանիզմներ կսկսեն կառուցվել արդեն այլ սահմանի վրա: Ընդ որում, ես կարող եմ ենթադրել, որ Ռուսաստանը դա կարող է անել միակողմանի՝ առանց ԵԱՏՄ մեխանիզմներին նայելու:

- Ոմանց մոտ տպավորություն կա, որ ՀՀ ներկայիս իշխանություններն ավելի շատ գնում են դեպի Թուրքիայի եւ Ադրբեջանի ազդեցության ոլորտ, քան թե ԵՄ:

- Այո, կա նման բան: Խնդիրն այստեղ է, եւ դա ավելի լայն է, քան Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հարաբերությունները, հայկական ազգայնականությունը բազմաթիվ տասնամյակներ եղել է աշխարհաքաղաքական ֆակտոր թե՛ Օսմանյան կայսրության, թե՛ Ռուսական կայսրության, թե՛ Սովետական Միության, թե՛ հայկական սփյուռքի եւ թե՛ հետխորհրդային տարիների առաջին տասնամյակներին, եւ հարցը, որ տեղին է հիմա տալ, հետեւյալն է. այդ հայկական ազգայնականությունը, որը երկար ժամանակ եղել է աշխարհաքաղաքական ֆակտոր, հիմա գնո՞ւմ է, դադարեցնո՞ւմ է իր գործունեությունը: Այն հստակ չկա նույնիսկ Հայաստանում, որովհետեւ, այո, մենք տեսնում ենք, որ ՀՀ իշխանությունների կողմից շատ ակտիվ փորձ կա՝ հայերի ազգային իդենտիֆիկացիան, ազգային հիշողությունը փոխելու, ազգային պատկերացումները՝ Հայաստանի շուրջ տեղի ունեցողի մասին, սակայն դժվար է գնահատել, թե որքանով է այդ փորձը հաջողվել: Եթե այն հաջողվի, ու իշխանությունն իսկապես հասնի նրան, որ Հայաստանի քաղաքացիների մեծ մասը համաձայն լինի, որ Հայաստանը դառնա Ադրբեջանի ու Թուրքիայի պրոտեկտորատի ինչ-որ մաս, այս դեպքում ի՞նչ կարող են անել արտաքին ուժերը: Նրանք կարող են միայն դա ի գիտություն ընդունել եւ դրանից որոշակի եզրահանգումների գալ՝ իրենց քաղաքականության համար: Իսկ եթե այդպես չէ, ապա պետք է համոզվել, որ դա այդպես չէ: Ինձ թվում է, որ ընտրությունները, որոնք Հայաստանում տեղի են ունենալու մյուս տարի, այս առումով կարող են որոշիչ լինել:

- Իհարկե, այդ տեսանկյունից ընտրությունները շատ հակասական են, որովհետեւ երբեմն ընտրություններին չի մասնակցում բնակչության այն մասը, որը դժգոհ է իշխանությունների քաղաքականությունից, այնպես որ՝ միշտ չէ, որ ժողովուրդն է որոշում:

- Այո, նրանք երեւի համաձայն չեն եկեղեցու վրա գործադրվող ճնշումներին, երեւի դեմ են ազգային հիշողության վերանայմանը, բայց եթե չկա այն թեկնածուն, որի օգտին նրանք պատրաստ են քվեարկել եւ այդ պատճառով չեն մասնակցի ընտրություններին, նշանակում է՝ լինելու է այն արդյունքը, որը կլինի առանց իրենց:

- Դրա հույսը նաեւ իշխող կուսակցությունն ունի:

- Փաստորեն:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ԴԱՏԱԽԱԶԸ ՊԱՀԱՆՋԵԼ Է 4 ՏԱՐՈՎ ԱԶԱՏԱԶՐԿԵԼ ՍԱՀՄԱՆՆ ԱՊՕՐԻՆԻ ՀԱՏԵԼՈՒ ՓՈՐՁ ԱՐԱԾ ՎՐԱՑԻՆԵՐԻՆ

Թբիլիսիում հաշվառված, Երեւանում բնակվող, միջնակարգ կրթությամբ, ոչ մի տեղ չաշխատող, 1968թ. ծնված Գեորգի Օմարի Տաբագարիին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով Վրաստանի քաղաքացի, ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելու շուրջ նախնական համաձայնության գալով իր մտերիմ՝ Վրաստանի քաղաքացի, Տկիբուլի քաղաքում հաշվառված, Երեւանում բնակվող, միջնակարգ կրթությամբ, ոչ մի տեղ չաշխատող, 1972թ. ծնված Սոսո Շաքրոյի Օբոլաձեի հետ, վերջինիս հետ 2025 թվականի ապրիլի 19-ին, ժամը 21:30-ի սահմաններում գտնվելով Տաշիր համայնքի Նորաշեն գյուղի բնակավայրի մոտ, շրջանցելով Լոռու մարզում տեղակայված ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի 1-ին սահմանապահ ջոկատի 2-րդ սահմանապահ պարետատան «Սարչապետ» սահմանապահ ուղեկալը, ապօրինի՝ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի եւ «ՀՀ պետական սահմանի ռեժիմ սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի թիվ 702-Ն որոշման պահանջները դիտավորությամբ խախտելով, առանց սահմանված փաստաթղթերի եւ պատշաճ թույլտվության, հետիոտն մուտք գործելով սահմանային շերտ, փորձել են հատել ՀՀ սահմանը եւ մուտք գործել Վրաստան, սակայն նրանց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունն իրենց կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվել, քանի որ հայ-վրացական սահմանագծից շուրջ 650 մ հեռավորության վրա բռնվել են ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի ծառայողների կողմից: Գ. Տաբագարին եւ Ս. Օբոլաձեն մեղադրվում են ՀՀ քրեական օրենսգրքի 44-469 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով («Պետական սահմանն ապօրինի հատելու փորձը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ»): Նրանց նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանքը: Նախնական դատալսումների ժամանակ Ս. Օբոլաձեն, Գ. Տաբագարին եւ նրանց պաշտպանները ներկայացրել են արագացված վարույթ կիրառելու միջնորդություն: Նրանք հայտնել են, որ իրենց համար պարզ է ներկայացված մեղադրանքը, համաձայն են դրա հետ, առաջադրված մեղադրանքում իրենց լիովին մեղավոր են ճանաչում, միջնորդությունը ներկայացրել են կամավոր, մինչեւ միջնորդությունը ներկայացնելը խորհրդակցել են իրենց պաշտպանների հետ, գիտակցում են արագացված վարույթ կիրառելու հետեւանքները եւ պնդում են ներկայացված միջնորդությունը: Հանրային մեղադրողն արագացված վարույթ կիրառելու դեմ չի առարկել: Դատարանը բավարարել է արագացված վարույթ կիրառելու մասին մեղադրյալների միջնորդությունը եւ նշանակել լրացուցիչ դատալսումներ: 2025թ. օգոստոսի 15-ին Վանաձոր քաղաքում Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արմեն Պողոսյանը վճռել է Գեորգի Տաբագարիին եւ Սոսո Օբոլաձեին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 44-469-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով եւ դատապարտել ազատազրկման 3 տարի ժամկետով, նշանակված պատժին հաշվակցել 2025թ. ապրիլի 19-ից մինչեւ օգոստոսի 15-ն անազատության մեջ գտնվելու 3 ամիս 25 օրը եւ վերջնական պատիժ սահմանել ազատազրկում՝ 2 տարի 8 ամիս 5 օր ժամկետով, Քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կարգով ազատազրկման ձեւով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել եւ սահմանել փորձաշրջան 1 տարի ժամկետով, Գ. Տաբագարիի եւ Ս. Օբոլաձեի վրա փորձաշրջանի ընթացքում դնել հետեւյալ պարտականությունները՝ առանց դատապարտյալների վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության ՀՀ տարածքը չլքելը, բնակության վայրը փոխելու դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին սեղմ ժամկետում իր նոր բնակության վայրի հասցեն հայտնելը, Գ. Տաբագարիի եւ Ս. Օբոլաձեի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանքը, փոփոխել եւ վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել բացակայելու արգելքը, մինչեւ դատավճռի՝ օրինական ուժի մեջ մտնելը, Գ. Տաբագարիին եւ Ս. Օբոլաձեին անհապաղ ազատ արձակել դատական նիստերի դահլիճից: Մեղադրող Արտուշ Կարապետյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ խնդրելով բեկանել նշված դատավճիռը. Գ. Տաբագարիի եւ Ս. Օբոլաձեի նկատմամբ ՀՀ քրօր. 44-469-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով ազատազրկման ձեւով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնել եւ վերջիններիս նկատմամբ որպես պատիժ սահմանել ազատազրկում՝ 4 տարի ժամկետով: Այս գործով վերաքննիչ դատարանում վերջին նիստը կայացել է նոյեմբերի 3-ին: Որոշում դեռ չկա:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՓՈԽԱՐԵՆ՝ ԲԻԶՆԵՍ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ս եկն ԱԺ փոխնախագահ աշխատող Հակոբ Արշակյանն է, մյուսը՝ Քրիստինե Պողոսյանը: Արշակյանն ասել է. «Չեմ առաջադրվել, չեմ ընդգրկվել ընտրացուցակում՝ տեսադաշտում ունենալով այն, որ ինձ ավելի էֆեկտիվ եմ համարում Հայաստանի բիզնեսի, տեխնոլոգիաների, ռազմարդյունաբերության զարգացման, ինչպես նաեւ՝ Հայաստանի՝ մրցակցային առումով բարձրացման տեսանկյունից»: Քրիստինե Պողոսյանն էլ է ուզում օգուտ բերել Հայաստանի տնտեսությանը. «Նոր բիզնես պլաններ ունեմ, ուզում եմ ՀՀ տնտեսությանն օգուտ բերեմ: Շարունակելու եմ մնալ կուսակցությունում»: ՔՊ-ականները բիզնեսով եւ գործարարությամբ են զբաղվում ոչ թե անձնական օգուտի համար, այլ՝ բացառապես հանուն Հայաստանին օգուտ տալու, նրա մրցակցային առավելությունների բարձրացման համար: Նման անշահախնդիր, հայրենասեր գործարարներ ամեն երկրում եւ ամեն տեղ չես հանդիպի, սրանցից միայն ՔՊ-ում են: Եվս երկու ՔՊ-ական՝ Խաչատուր Սուքիասյանը եւ Փաշինյանի անդրորդի Հրաչյա Հակոբյանը, նույնպես չեն առաջադրվել ՔՊ ցուցակում, Սուքիասյանը մինչեւ ՔՊ ցուցակով պատգամավոր դառնալն էր գործարար, իսկ Հրաչյա Հակոբյանը գործարարությամբ էր զբաղվում նաեւ պատգամավորական գործունեության հետ միասին, համատեղում էր: Ինչո՞ւ Հակոբ Արշակյանը կամ Քրիստինե Պողոսյանը չէին կարող Սուքիասյանի կամ Հակոբյանի նման բիզնեսը համատեղել պատգամավորության հետ, չէ՞ որ բազմաթիվ ՔՊ-ականներ են այդպես վարվում:

Եթե հավատալու լինենք Հակոբ Արշակյանի եւ Քրիստինե Պողոսյանի պաշտոնական կենսագրություններին, նրանք ժամանակին, մինչեւ ՔՊ-ական նախարար կամ պատգամավոր դառնալը, գործարարությամբ են զբաղվել, Արշակյանն ընդամենը հինգ ամիս՝ 2018թ. հունվարից մինչեւ մայիս, «Արաքսիս Ինժեներինգ» ընկերության հիմնադիր, գործադիր տնօրենն է եղել, մինչ այդ եղել է վարձու աշխատող այլ ընկերություններում: Պողոսյանը գործարարի ավելի երկար ստաժ ունի՝ 2013-2018թթ.: Tre gufo հայկական արծաթյա զարդերի խանութի հիմնադիր տնօրենն է եղել: Բայց նրանք, այնուամենայնիվ, նախարարի, ԱԺ նախագահի, պատգամավորի գործը համարել են ավելի նախընտրելի, քան գործարարինը: Հիմա ի՞նչ է փոխվել, որ նրանք որոշել են նորից վերադառնալ գործարարության, այն էլ՝ ոչ թե հանուն եկամուտ ստանալու, բարեկեցիկ կյանք վարելու, այլ բացառապես հանուն Հայաստանի, բայց ՔՊ կուսակցության անդամի կարգավիճակում:

Բացատրությունը շատ պարզ է. այս մարդիկ կորցրել են Փաշինյանի բարեհաճությունը, Փաշինյանը սրանց չի ցանկանում տեսնել ո՛չ խորհրդարանում, ո՛չ էլ գործադիր իշխանությունում: Բայց երկարամյա ծառայության դիմաց որոշել է սրանց առանձնապես չնեղացնել, ասել է՝ կօգնեմ, որ գործարարությամբ զբաղվեք, եթե, իհարկե, ձեզ խելոք պահեք եւ շարունակեք մնալ իմ անձնական վերահսկողության տակ: Մի քիչ սիրուն բան չի լինի, չէ՞, եթե մարդը դադարի ՔՊ պատգամավոր լինել եւ միանգամից սկսի քննադատել կամ պայքարել Փաշինյանի իշխանության դեմ, ինչպես եղել է շատերի դեպքում: Կստացվի, որ բոլոր ՔՊ-ականները դեմ են Փաշինյանին, ուղղակի չեն արտահայտվում միայն մանդատի կամ պաշտոնի բերումով, երբ դա կորցնում են, միանգամից դառնում են թունդ ընդդիմադիր:

Փաշինյանի հովանու ներքո գործարարությամբ զբաղվելն ապահովելու է բիզնեսի մրցունակություն եւ բարձր եկամտաբերություն: Հակոբ Արշակյանը բացահայտում է, թե մոտավորապես ինչ է պայմանավորվել Փաշինյանի հետ. նա ասում է, որ զբաղվելու է ռազմարդյունաբերությամբ: Այս ոլորտն ամբողջապես կախված է պաշտպանության նախարարությունից, նախարարության կողմից տրվող պատվերներից: Եթե դու զբաղվում ես ռազմարդյունաբերական արտադրանք թողարկելով, բայց պաշտպանության նախարարությունից պատվերներ չունես, շատ արագ կսնանկանաս, եւ հակառակը՝ եթե Փաշինյանն ասի, որ դու կարող ես վստահ լինել, որ պատվերների խնդիր չես ունենալու, քո արտադրած ապրանքները եւ մատուցած ծառայությունները պահանջարկ եւ երաշխավորված սպառում են ունենալու, բիզնեսի եկամտաբերությունն ապահովված է: Փաշինյանը կարող է ցանկացած յուրային բիզնեսմենի ապահովել հարկային եւ մաքսային արտոնություններով, որոնք կապահովվեն այդ բիզնեսի մրցունակությունը, մրցակցային առավելությունները նման գործունեություն իրականացնող այլ ընկերությունների նկատմամբ: Գործարարությամբ զբաղվել, առանց իշխանության աջակցության կամ իշխանության աջակցության պայմաններում՝ միանգամայն տարբեր բաներ են. այնպես որ, պատահական չէ, որ Քրիստինե Պողոսյանը հատուկ շեշտում է, որ չնայած պատգամավորի թեկնածու չի առաջադրվել, բայց նույնիսկ գործարարի կարգավիճակում շարունակելու է մնալ կուսակցության անդամ՝ գտնվել ՔՊ-ի, իշխանության հովանոցի տակ:

Փաշինյանն ապականել է ոչ միայն քաղաքական դաշտը, այլ նաեւ՝ գործարար միջավայրը, որքան նա երկար մնա իշխանության, նրա կողմից բուծված եւ նրա հովանավորությունը վայելող «գործարարները» խնդիր են դառնալու մյուս՝ իշխանության հովանավորությունը չվայելող, ՔՊ անդամ չհանդիսացող գործարարների համար: Այս մարդիկ եւս պետք է հասկանան, որ փաշինյանական իշխանությունը կործանարար է ոչ միայն երկրի համար՝ ընդհանրապես, նաեւ յուրաքանչյուրի համար՝ անհատապես:

ՔՊ-ական երկու պատգամավոր, ովքեր 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ ՔՊ ցուցակում չեն լինի, որոշել են զբաղվել գործարարությամբ՝ բիզնեսով:



Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ԿՈՉԵՑՅԱԼԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԿԵՂԾԻՔԸ

Կառավարության հերթական նիստից հետո, լրագրողների հետ կարճատեւ հանդիպման ժամանակ, վարչապետի պաշտոնը զբաղեցնողը հերթական կեղծիքը մատուցեց հանրությանը: Նրան հարց տվեցին. «Չի՞ փորձել, արդյոք, խնդիրը հրապարակայնացնելու փոխարեն հանդիպել կաթողիկոսի հետ եւ նրա հետ առանձին քննարկել իր մտահոգությունները»: Արձագանքելով դրան՝ վերջինս հարազատ մնաց իր բնույթին եւ նշեց, որ ինքը հրապարակային գործիչ է եւ երբեք չի դիմում կուլիսային գործելաոճին: Իհարկե, դա սուտ է, ու բազմաթիվ օրինակներ են առկա՝ հակառակն ապացուցող: Առաջինն այն է, որ 2018-ին հայկական «ագորա» խոստացողը դա երբեք կյանքի չկոչեց եւ հասարակությունից գաղտնի ստորագրեց 2020-ի խայտառակ պարտությունն ամրագրող եռակողմ հայտարարությունը:

Իսկ վերջին բացահայտումը ներկայացվեց «Լուսավոր Հայաստան» կուսակցության ղեկավար Մարուբյանի՝ նախորդ օրվա լայվում, որում ասվեց, որ 2019-ին ինքը, որպես ԱԺ նույնանուն խմբակցության ղեկավար, թե՛ վարչապետին եւ թե՛ ԱԳ այն ժամանակվա նախարարին հրավիրել է խմբակցության նիստին՝ պարզելու, թե չկա՞մ արդյոք ղարաբաղյան կարգավորման նոր առաջարկ՝ Մինսկի խմբի կողմից: Դրա անհրաժեշտությունը ծագել էր, քանի որ նոր առաջարկի մասին մամուլում նյութեր էին տարածվել: Երկուսից էլ ստացել է հաստատակամ ժխտական պատասխան: Այնինչ, երեկ բացահայտվեց, որ, այո, նման առաջարկ եղել է: Թե ինչպես է դա համադրվում հրապարակային գործչի կերպարին, երեւի կիմանա միայն վարչապետի աթոռից կառչածը:

Անցնենք առաջ: Եկեղեցու դեմ իր ծավալած պատերազմի առումով ասում է, թե հարցը պահանջի ժանրից չէ, որպեսզի ինչ-որ մեկը պահանջի Կտրիճ Ներսիսյանի հրաժարականը: Հարցը, ըստ նրա, ոչ թե ընտրության մեջ է՝ կտա, թե չի տա հրաժարական կաթողիկոսը, այլ՝ այն բանի մեջ, որ պրոցես է սկսվել, եւ Կտրիճը պետք է գնա «ընտեղից»: Այստեղ կանգ առնենք: Ասենք, որ, նախ, պրոցեսն ինքն իրեն չի սկսվել, այլ այն նախաձեռնվել է հենց իր կողմից, ինչի ո՛չ բարոյական եւ ո՛չ էլ իրավական իրավունքն ինքը չուներ եւ չունի: Դա՝ մեկ, եւ երկրորդ. «ընտեղից Կտրիճ Ներսիսյանի գնալն» իրենից կախված չէ, որովհետեւ ինքը ո՛չ Աստված է (մեղա՛, մեղա՛) եւ ո՛չ էլ նույնիսկ պուճուր Ստալին, որպեսզի իր խոսքն օրենք լինի Վեհափառի համար: Երեւի մեր հոգեւոր հորն ինքը շփոթում է իր ուսապարկերի հետ, որոնք, առանց ձայն հանելու, մեկ sms ստանալով՝ հրաժարական են ներկայացնում:

Լրագրողի դիտարկմանը, թե կաթողիկոսի հետ մասնավոր քննարկման դեպքում հայոց եկեղեցու շուրջ նման աղմուկ չէր բարձրանա, չէր վարկաբեկվի հայոց եկեղեցին, արձագանքն ավելի քան պոպուլիստական էր. «Մեր երկիրը ժողովրդավարական է, եւ դա առողջացնող աղմուկ է»: Իրականում, ինչպես հայտնի է, մեր երկիրը վաղուց բռնել է բռնապետության ուղին, վկա՝ մի քանի տասնյակ քաղկալանավորների առկայությունը: Իսկ այն, որ գործող իշխանությունը նրանց քաղկալանավոր չի համարում, ոչինչ չի նշանակում: Խորհրդային Միության մեջ եւս, ըստ այն տարիների պաշտոնական հռետորաբանության, քաղկալանավորներ չկային: Բայց իրականությունը ճիշտ հակառակն էր, ինչը բազմիցս վկայել է Արեւմուտքը: Ուրիշ հարց, որ արեւմտյան պետությունների աշխարհաքաղաքական շահերն առաջ տանող վարչապետին այնտեղից չեն ասում, թե աչքիդ վերեւում ունք կա:

Բայց դա չի նշանակում, չէ՞, որ իրենց արտահայտած կարծիքների համար բանտերում հայտնված անձինք դադարում են լինել քաղկալանավոր: Ճիշտ նույն ձեւով էլ խորհրդային իշխանությունն ինքն իրեն ներկայացնում էր ոչ թե որպես բռնատիրական, այլ համաժողովրդական երկիր: Կարծում եմ, որ 1975 թվականին ծնված Նիկոլը զարմանալիորեն լավ դաս է առել այն իշխանությունից, որն իր պատանի տարիքում արդեն վերացել էր: Իսկ հետո էլ, չգիտես ինչու, բողոքում էր «ԿԱԳԵԲԵ»-ից կամ «գլավլիտից»: Ինչ վերաբերում է ազատ ընտրությունների միջոցով իշխանություն ձեւավորելուն, ապա՝ վա՛յ այդ ընտրություններին: Ի դեպ, սովետի ժամանակ էլ էր պաշտոնապես հայտարարվում, որ իշխանությունը ձեւավորվում է ազատ ընտրությունների միջոցով: Հո չէ՞ր հայտարարվելու, որ մարդիկ նույնիսկ չէին գնում ընտրատեղամաս, ու դպրոցականների միջոցով էին տներից հավաքվում քվեաթերթիկները, որտեղ մեկ թեկնածուի անուն էր լինում հաճախ: Ես, համենայնդեպս, եղել եմ դրա մասնակիցներից մեկը:

Ի դեպ, որպես Վեհափառի՝ հոգեւոր կյանքից դուրս լինելու մասին վկայություն, Նիկոլի կողմից ներկայացվում է այն, թե դեպի ԱՄՆ ժամեր տեւած իրենց համատեղ թռիչքի ընթացքում ինքը չէր «համարձակվում» (նու տի դայոշ՝ կասեր ռուսը) այդ թեմաների վերաբերյալ խոսակցություն բացել, իսկ կաթողիկոսն էլ չէր բացում: Իսկ եթե այդ հարցին մոտենանք հակառակ կողմից, ապա կստացվի, որ նախկին լրագրողը, որ դարձել է վարչապետ, կաթողիկոսի հետ առաջինը ինքը պետք է սկսեր խոսել այդ թեմատիկայից, եթե, իհարկե, դա իրեն հետաքրքրում էր: Զարմանում եմ, որ այդքան տարի լրագրող լինելով՝ դա չի գիտակցել կամ էլ գիտակցել է, բայց այժմ ամեն ինչ շուռ տված վիճակում է ներկայացնում՝ այնպես, ինչպես հիմա իրեն ձեռնտու է:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ԱՊԱՐԱՆՑԻ ՄԻ ՉՈՐՍ ԲԱՐԵԿԱՄ ՉՈՒՆԵ՞Ք՝ 1,86 ԲՈՅՈՎ, ԳԱ ՀԱՐՑԵՐԸ ԼՈՒԾԻ՝ ԵԿԵՂԵՑԻՆ ԱԶԱՏԻ

ՎԵՃ

Կարգալույծ արված Ստեփան Ասատրյանը հոկտեմբերից հրաժարվում է ազատել Հովհաննավանքի տարածքը եւ եկեղեցու բանալիները հանձնել Արագածոտնի թեմի վարչական խորհրդի ատենապետ տեր Շնորհք աբեղա Պալոյանին, իսկ Մայր Աթոռի կողմից ծառայողական նպատակներով տրամադրված բնակարանն ազատել: «Ստեփան Ասատրյանն իրազեկվել է, որ Հովհաննավանքում այսուհետ ծեսերն իրականացնելու են տեղում սպասավորող քահանաները, եւ հորդոր է հղվել՝ ձեռնպահ մնալ ծեսերի, այդ թվում՝ Սուրբ պատարագի խորհրդի մատուցմանը որեւէ կերպ խոչընդոտելուց, ինչը ոչ միայն կանոնական կոպտագույն խախտում է, այլեւ՝ քրեորեն պատժելի արարք: Ստեփան Ասատրյանը, անտեսելով Մայր Աթոռի օրինական պահանջները, հրաժարվում է հանձնել եկեղեցու բանալիները եւ ազատել Հովհաննավանքի տարածքը»,- ասված է Գերագույն հոգեւոր խորհրդի հայտարարության մեջ: «Դատապարտելի է հատկապես վարչապետի աջակցությամբ Հովհաննավանքում սուրբ պատարագի անվան ներքո միջոցառում կազմակերպելու Ստեփան Ասատրյանի հոգեկործան նախաձեռնությունը: Սա իշխող քաղաքական ուժի ղեկավարի կողմից եկեղեցին պառակտելու հերթական փորձ է՝ հակաօրինական ու հակաեկեղեցական իր բոլոր դրսեւորումներով»,- ընդգծել է Խորհուրդը:

Նշվում է, որ եկեղեցիները, վանքերը եւ այլ սրբավայրերը եկեղեցու ժառանգությունն են, եւ, անկախ այդ պատմամշակութային արժեքների նկատմամբ սեփականության իրավունքից, կրոնական ծեսեր կատարելու եւ պատարագներ մատուցելու կանոնական իրավունքը բացառապես վերապահված է Հայ առաքելական եկեղեցուն:

Գերագույն հոգեւոր խորհուրդն իրավապահ մարմիններին դեռ 1.5 ամիս առաջ է հորդորել՝ կանխել ապօրինությունները եւ ապահովել Հովհաննավանքում սպասավորող քահանաների բնականոն ծառայությունը, սակայն իրավապահները կատարում են Նիկոլ Փաշինյանի հրահանգները եւ պաշտպանում են օրինազանցի իրավունքները:

Հիշեցնենք. տեւական ժամանակ է՝ ՀՀ իշխանությունը արշավ է սկսել եկեղեցու ու հատկապես կաթողիկոսի դեմ: Ճաղերի հետեւում են «Սրբազան պայքար» շարժման առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը, Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ սրբազանը եւ Արագածոտնի թեմի դիվանապետ Գարեգին Արսենյանը: Օրեր առաջ էլ 10 եպիսկոպոս դավաճանեցին Հայ առաքելական եկեղեցին՝ անցնելով իշխանության կողմը: Նրանց շարքերում են՝ ժամանակին Փաշինյանի կողմից պարսավանքի արժանացած Կճոյանը, Արցախի թեմի առաջնորդը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի նախկին դեկանը եւ այլք: Ինչո՞ւ Մայր Աթոռը նրանց եւս կարգալույծ չի հռչակում: Գուցե կան մտավախություններ, որ նրանք նույնպես, Ստեփան Ասատրյանի օրինակով, չեն լքի Մայր Աթոռին պատկանող տարածքները, իսկ իրավապահներն էլ նրանց եւս կպաշտպանեն:

Փաստաբան **Ալեքսանդր Սիրունյանը**, որն իր էջում անընդհատ Վեհափառի քննադատությամբ է հանդես գալիս, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնում է թեմային: «Չկարծեք, թե իշխանություններին եմ պաշտպանում, բայց զինված մարդն իրավունք չունի մտնելու վանք, եկեղեցու տարածք: Ոնց որ գլուխը չծածկած կնիկը չունի իրավունք՝ եկեղեցի մտնելու, նույնկերպ էլ՝ զինված մարդը: Դա սխալ է: Խնդիրն այստեղ է: Ոստիկանների խելքը չի հասնում՝ էսքան բանը բացատրեն: Եթե ես լինեի ոստիկանապետ, պապայի արեւ, կասեի՝ զինված մարդը չփորձի մտնի եկեղեցի: Բոլորդ ասում եք, որ պետությունը խառնվում է եկեղեցու գործերին, պետությունը պիտի ակնհայտորեն հայտարարի, որ չի խառնվելու եկեղեցու հարցերին: Ի՞նչ եք առաջարկում՝ զենքով մտնեն, եկեղեցին պղծե՞ն»,- տարակուսում է Սիրունյանը՝ մոռանալով, որ ընդամենը 2 ամիս առաջ Մայր Աթոռի տարածք ոստիկաններ եւ ԱԱԾ-ականներ էին ներխուժել՝ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանին բերման ենթարկելու նպատակով: «Նրանք եկեղեցի չէին մտել, մտել էին եկեղեցու տարածք: Հիմա հո սատկա չե՞ն պահելու, որ Տեր Արամին բռնեն: Նա ինչ է արել, եկեղեցու բանալին մոտն է, չէ՞: Ոստիկանները վերցնեն նրան, ո՞ւր տանեն, ասեք՝ տեսնեմ: Պատկերացրեք՝ դա եկեղեցի չէ, տուն է, մի օր դուրս է, չէ՞, գալիս հաց առնելու, թող եկեղեցին ինքը նրան հեռացնի իր տարածքից: Մի օր դուրս է, չէ՞, գալիս եկեղեցուց, հենց դուրս է գալիս, գնացեք, եկեղեցուն տեր կանգնեք, ձեր ցավը տանեմ, ոստիկանությունն էստեղ մեղք չունի: Ես ոչ մեկին չեմ պաշտպանում, ազնիվ խոսք, եկեղեցին եկեղեցի է մնում, իր սխալներով հանդերձ, բայց կաթողիկոս, դու քո վանքին ինչի՞ տեր չես կանգնում»:

Օրինակ, եթե Դուք լինեիք կաթողիկոսի փոխարեն, ի՞նչ կանեիք: «Ես: Ես ուղղակի թարախավարի մի քանի ժամ կսպասեի, երբ Տեր Արամը, թե ով, դուրս գար, դեմը կառնեի: 3-4 հատ ջանավոր քահանա կուղարկեի՝ էն ջահելներից, որ կան, կասեի՝ գնացեք մտեք վանք, ու առը հա, թե էդտեղ կարար մեկը մտներ: Երբ մեզ դիմում են, ասում են՝ Պողոսը եկել է, մտել է մեր տարածք, դուրս չի գալիս, ասում եմ՝ արա, ապարանցի մի չորս բարեկամ չունե՞ք՝ 1,86 բոյով, գա հարցերը լուծի: Բնակարանային վեճերով անգամ դատարան մտնելն է անիմաստ: Դու քո տունը կարող ես ազատել բոլոր տեսակի մարդկանցից: Ձեռքերից բռնած կամ տփելով՝ առանց գլուխը ջարդելու, հանեք, էլի....»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԷԼ Է ՄՈՆՈՊՈԼԻԶԱՑՐԵԼ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Թեեւ ամանորյա ու սուրբծննդյան արձակուրդներին դեռ բավականին ժամանակ կա, սակայն Վրաստանում իշխող քաղաքական մեծամասնությունը սկսել է ամփոփել 2025 թվականը: Ու դա վրացական իշխող քաղաքական վերնախավից առաջինն արել է «Վրացական երազանք» կուսակցության լիդերներից մեկը՝ Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն:

Նա հանդես է եկել վրացական քաղաքական գործիչներին հատուկ էմոցիոնալ բնորոշումներով մի տեքստով՝ հայտարարելով, որ իրենք որեւէ մեկին թույլ չեն տա ոտնատակ տալ վրացական պետության անկախությունը, քանի որ հայրենիքը վեր են դասում ամեն ինչից: «Մենք ընտրված ենք բնակչության մեծամասնության կողմից այն բանի համար, որ պահպանենք խաղաղությունն ու առաջընթացը»,- նշել է Կալաձեն:

Իրականում, եթե հետեւենք վրացական քաղաքական կյանքի զարգացումներին, ապա կտեսնենք, որ Կալաձեի կողմից տարին ամփոփելը պատահական չէ: Մեկ տարի առաջ՝ նոյեմբերի 28-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն հայտարարել էր, որ Վրաստանը սառեցնում է ԵՄ-ի հետ եվրաինտեգրման բանակցությունները: Սառեցման ժամկետ էր սահմանվել 2028 թվականը: Վրաստանում այդ ընթացքում պետք է տեղի ունենային խորհրդարանական հերթական ընտրությունները: Սահմանված ժամկետը բավարար է՝ հեռանկարները գնահատելու եւ ամեն բան ծանրութեթեւ անելու համար: Վարչապետ Կոբախիձեի մեկամյա վաղեմության այդ որոշումները դարձան պատճառ, որպեսզի երկրում ընդդիմությունը սկսի բողոքի ակցիաներ: Թեեւ դրանց ամենաակտիվ փուլը եղավ 2024 թվականի հոկտեմբերի 28-ի խորհրդարանական ընտրություններից հետո, որով ընդդիմությունը չճանաչեց ընտրության արդյունքները: Նոյեմբերի վերջին արդեն այդ ցույցերը, կարելի է ասել, «ուժասպառ» եղան: Սակայն այս տարի եղավ մի պահ, որ նույնիսկ սկսեցին մտածել, թե բողոքի գործողությունների համար «երկրորդ շնչառություն» է բացվել: Ժամանակն անցավ, եւ պարզվեց, որ դա սխալ տպավորություն էր: Կառավարությունը կարողացավ դիմակայել նաեւ այդ մարտահրավերին: Ավելին, կարողացավ երկրի համար կարեւոր նոր իմաստային թեզիսներ ձեւակերպել ու դնել շրջանառության մեջ:

Եվ այսպես, ինչ է տեղի ունեցել Վրաստանում՝ ԵՄ-ի հետ հարաբերությունների ընդհանուր սառեցման այս մեկամյակի ընթացքում: Սկսենք ներքաղաքական հարթությունից: Ընդդիմությունն այդպես էլ չկարողացավ «կենսունակության նոր լիցք» հաղորդել բողոքի գործողություններին: Ընդդիմությունը պարզապես արձանագրեց, որ «ապաեվրոպականացման» մեկ տարին լրացավ, սակայն իր գաղափարներն այդպես էլ չկարողացավ այնքան տարածել ժողովրդական զանգվածների մեջ, որ հաջողացներ հասնել իշխանափոխության: Իշխանությունների գործողությունները դարձան ավելի կոշտ: Ու ընդդիմությունը շատ անելիք չունեցավ:

Իշխանությունը մոնոպոլիզացրեց խաղաղության գաղափարը, ինչպես դա արվում է Հայաստանում, թեեւ Հայաստանի դեպքում քաղաքական կյանքի զարգացումներն այլ ալգորիթմով են ընթանում: «Վրացական երազանքը» կարողացավ ձեւակերպել հետեւյալ թեզիսը. «Եթե դուք մեզ հետ չեք, ուրեմն պատերազմի կողմնակից եք ու դեմ եք խաղաղությանը»: Այս մոդելը, ի դեպ, աշխատում է դեռ վրացական իրականության պայմաններում: Արտաքին քաղաքականության ոլորտում ընդդիմությունը կառավարության վարած կուրսը բնորոշում է որպես «արեւմտյան քաղաքակրթական ընտրությունից ամբողջական հրաժարում» ու բաց է թողնում բոլոր նրբությունները: Վրացական իշխանություններն իրականում չեն հրաժարվել ԵՄ անդամակցության հեռանկարից: Նրանք հիմա կենտրոնացել են բրյուսելյան ներկայիս բյուրոկրատիայի դեմ քննադատության վրա: Կասեցումը դեռ հրաժարում չի նշանակում: Միացյալ Նահանգների հետ Թբիլիսին փորձեց նոր գաղափարական հիմքի վրա հարաբերություններ կառուցել: Հիմքում դրվեցին ընդհանուր պահպանողական արժեքները, որոնք «հարազատացնում» են Թրամփի թիմին ու «Վրացական երազանքին»:

Ասել, թե լուրջ արդյունքներ եղան, կնշանակի չափազանցնել իրականությունը: Առավել դինամիկ զարգացան Թբիլիսի-Պեկին հարաբերությունները: Վրաց-չինական հատկապես գործարար հարաբերությունները որակապես նոր մակարդակի բարձրացան: Կողմերը խոսում են արդեն համագործակցության ռազմավարական բնույթի մասին: Ռուսաստանի պարագայում շատ ավելի ենթադրություններ ու շահարկումներ կան, քան իրական քայլեր: Քաղաքական երկխոսությունը Թբիլիսիի ու Մոսկվայի միջեւ դեռեւս չի սկսվել: Տնտեսական կապերը շարունակում են զարգանալ: Սա էլ թերեւս պետք է դիտարկել, այսպես կոչված, «կովկասյան պարադոքսի» շրջանակում:

Սերգեյ Մարկեդոնով

Պատրաստեց Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

Ինչպես նվաճել Փարիզը

Այս ամիս էկրան կբարձրանան «Էմիլին՝ Փարիզում» կուլտային սերիալի հերթական՝ 5-րդ եթերաշրջանի սերիաները: Սերիալը պատմում է երազկոտ ու հեռանկարային աղջկա մասին, որը Չիկագոյից տեղափոխվում է Փարիզ, որտեղ բոլոր տղամարդիկ խելագարվում են նրա համար: Այն պատմում է նորաձեւության աշխարհի մասին, բարձրացնում է արդիական հարցեր, որոնք վերաբերում են մարդկանց միջանձնային հարաբերություններին եւ նոր միջավայրում մարդկանց հետ ինտեգրվելուն: Գլխավոր դերում հանդես է եկել Լիլի Քոլինսը: Նրա հերոսուհին՝ Էմիլի Կուպերը, ապրում է Չիկագոյում, զբաղվում է մարկետինգով: Ընկերությունը, որտեղ նա աշխատում է, գնում է Savoir ֆրանսիական ընկերությունն ու Էմիլիին մեկ տարով գործուղում է Փարիզ: Այնտեղ նա պետք է համոզի բռնակալ ղեկավարին, որ անհրաժեշտ է թանկարժեք ֆրանսիական լյուքս դասի բրենդները գովազդել սոցկայքերում: Այստեղ շատ բան, ըստ կինոգետների, հիշեցնում է «Սատանան «Պրադա» է հագնում» սիրված ֆիլմը: Սկզբում նրան չեն ընդունում, հետո երախտագիտություն են հայտնում՝ կատարած աշխատանքի համար: Սակայն աղջիկը չի կարողանում ընտելանալ իր հանդեպ տղամարդկային չափազանց մեծ ուշադրությանն ու «բացասական արձագանքներին»: Սերիալում նաեւ ցույց է տրված, թե սոցկայքի սովորական օգտատերն ինչպես է կարողանում «զարգանալ» ու դառնալ սոցկայքային հայտնի բլոգեր, ինֆլյուենսեր, որի հետ արդեն շատ հայտնի բրենդներ են երազում աշխատել: Նաեւ կարելի է տեսնել, թե Փարիզում հայտնված աղջիկն ինչպես է ընկնում նորաձեւության հորձանուտը եւ փորձում տարբեր կերպարներ, որոնցից շատերը ճաշակով առանձնապես աչքի չեն ընկնում: Սերիալի ռեժիսորը Դարեն Սթարն է, որը խոստովանում է, որ սիրահարված է ֆրանսիական մշակույթին եւ որոշ ժամանակ ապրել է Փարիզում:

ՀՈԳԵՎՈՐ ԴԵՊՔԵՐ

Նոյեմբերի 7-ին լրացավ Խորհրդային Հայաստանի ամենից վաստակաշատ ու բարեկիրթ, բայց միաժամանակ լիովին մոռացված ղեկավար Գրիգոր Հարությունովի ծննդյան 125-ամյակը: 1937թ. վերջին ընտրվելով Խորհրդային Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար՝ նա 16 դժվարագույն տարի ղեկավարեց հանրապետությունը: Չնայած այն իրողությանը, որ հենց նրա անմիջական նախաձեռնությամբ դրվեցին Հայաստանի արդյունաբերական, քաղաքաշինական, գիտական ու մշակութային վերելքի հիմքերը, նրա անունը ներկա սերնդին անծանոթ է:

Երբ Հարությունովը Թբիլիսիից (որտեղ ղեկավարում էր Վրաստանի մայրաքաղաքի կուսկազմակերպությունը) գնացքով ժամանեց Երեւան, նրան ապշեցրեց քաղաքի օդի ծայրահեղ աղտոտվածությունը: Իր պաշտոնավարման առաջին իսկ օրերին Երեւանի զարգացման գլխավոր հատակագիծը քննարկելիս, նրա նախաձեռնությամբ որոշում ընդունվեց անհապաղ սկսել Նորքի ջրանցքի կառուցումը, որը թույլ տվեց իրականացնել Քանաքեռի ու Նորքի լանջերի ինտենսիվ կանաչապատումը: Մարկ Գրիգորյանի (1937-51թթ. Երեւանի գլխավոր ճարտարապետ) վկայությամբ՝ Հարությունովը բացառիկ կարեւորություն էր տալիս քաղաքի եւ ողջ հանրապետության կանաչապատմանը՝ անձամբ ծանոթանալով այդ նպատակով ընտրվող ծառերի դեկորատիվ, սանիտարական, կլիմայական եւ օդապաշտպան հատկանիշներին: Նրա նախաձեռնությամբ Վրաստանից բերվեցին այն վեհաշուք սոսիների տնկիները, որոնք դեռեւս զարդարում են Երեւանի կենտրոնական՝ Մաշտոցի պողոտան: Հայաստանի վաստակավոր շինարար Վազրիկ Սեկոյանը հիշում է. «Գրիգոր Հարությունովի ջանքերի շնորհիվ հիմնադրվեց Երեւանի օղակաձեւ այգին, կանաչապատվեց Նորքի լանջը, եւ հիմնվեցին մի շարք զբոսայգիներ»: Նա ոչ միայն նախաձեռնեց Երեւանում լայնածավալ ծառատնկումներ, այլեւ անձամբ էր մասնակցում ծառատեսակների ընտրությանը: Խորհրդային Հայաստանի կուսակցական-պետական նշանավոր գործիչ Ալեքսան Կիրակոսյանն իր հուշերում գրում է. «Գրիգոր Հարությունովի նախաձեռնությամբ ձեւավորվեցին քաղաքի կանաչապատման առաջին եւ երկրորդ գոտիները, որոնցից երկրորդը հասնում էր մինչեւ Արզնի»:

Ուշագրավ է ոչ միայն հանրապետության ղեկավարի անձնական ուշադրությունը եւ հոգատարությունը մայրաքաղաքի բնապահպանական վիճակի հանդեպ, այլեւ իր սերնդի բարձր քաղաքացիական պատասխանատվությունը՝ առհասարակ: Այսպես, Խորհրդային Հայաստանի մեկ այլ առաջատար ճարտարապետ Վարազդատ Հարությունյանի վկայությամբ՝ «երեւանցիների կամավոր մասնակցությամբ տնկվեց շուրջ 1000 հեկտար արհեստական անտառ: Դրա շնորհիվ Երեւանը պաշտպանվեց հյուսիսից ներխուժող փոշուց, եւ զգալիորեն բարձրացավ օդի մաքրությունը: Երեւանի բնակիչներն անձամբ դարձան «Հաղթանակ» եւ «Ծիծեռնակաբերդ» այգիների հիմնադրման մասնակիցներ»:

ՕԴՆ ԱՂՏՈՏՎԱԾ Է ՄԵՐ ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ

Իսկ այսօր միայն սրտի խոր ցավով կարելի է նկարագրել նշված, ինչպես նաեւ՝ օղակաձեւ, Դալմայի ու Չարբախի այգիների, Անտառային եւ Այգեստան թաղամասերի նախկինում կանաչ զանգվածների ողբալի վիճակը: Ու ակամա հարց է առաջանում՝ արդյո՞ք երկրի եւ մայրաքաղաքի հետխորհրդային ղեկավարները սիրել են իրենց հայրենի հողն այնպես, ինչպես Գրիգոր Հարությունովը եւ իր սերնդակիցները: Իմ գնահատմամբ՝ որեւէ համեմատություն չի խոսում մեր ժամանակակիցների օգտին: Փորձեք այսօրվա երեւանցուն ներգրավել ոչնչացրած տկարկների, պուրակների կամ այգիների վերականգնմանը: Փորձեք Դալմայի այգու եւ Նորքի անտառների տարածքում կառուցվող «էլիտար» շենքերի սեփականատերերին եւ դրանց շինթույլտվության հեղինակ չինովնիկներին բացատրել, որ կանաչապատ տարածքները քաղաքի «թոքերն» են, եւ թե ինչ հետեւանքներ կունենա դրանց ոչնչացումը...

Ոմանք գուցե առարկեն՝ նախկին սերունդներն առաջնորդվում էին ոչ թե խղճով, գիտակցությամբ եւ պատասխանատվությամբ, այլ՝ վախով: Ենթադրենք, թե այդպես է: Այդ պարագայում, ուրեմն, մեր սերունդը գործել ու շարունակում է գործել իր ազատ կամքով ընտրած բացարձակ անպատասխանատվությամբ: Եթե մեր ծնողների ու պապերի սերունդները գործում էին «Լեւիաթանին» ենթարկվելու բնազդով, ապա այսօր մեր ազատ ընտրությամբ է պայմանավորված համատարած անպատասխանատվությունը թե՛ մեր, թե՛ ապագա սերունդների հանդեպ: Մենք մի անազատությունը փոխեցինք շատ ավելի գռեհիկ անազատությամբ: Եթե նախկինում անազատությունը պայմանավորված էր տոտալիտար համակարգին ստիպողական ծառայությամբ, ապա ներկայիս անազատությունն ամենաթողություն է, քաղաքացիական առաքինության գիտակցված ու տոտալ մերժում: Ընդդեմ տոտալիտարիզմի պայքարում մենք ձեռք բերեցինք ազատություն, բայց այն ուղղեցինք ընդդեմ հանրային բարիքի: Այդպիսի ազատությունը ոչ միայն անկատար է եւ պակասավոր, այլեւ ազատության գաղափարի ուրացում է:

Արմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԽ պատգամավոր (1990-95թթ.)
ՀՀ ԱԺ պատգամավոր (1995-99թթ.)
ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԷԿՐԱՆ ԿԲԱՐՁՐԱՆԱ «ԿԵՍՕՐԸ» ՍԵՐԻԱԼԸ՝ ԸՍՏ ԿԼԻՄ ԿՈԶԻՆՍԿՈՒ ՎԵՊԻ

«Կեսօրը» սերիալի նկարահանման հիմքում, որի ռեժիսորը Կլիմ Կոզինսկին է, հայտնի «Բզեզը՝ մրջնանոցում» վեպն է, որը գրել են Արկադի եւ Բորիս Ստրուգացկիները՝ 1979 թվականին: Գիրքը մի քանի անգամ վերահրատարակվել է, թարգմանվել 19 լեզվով, սակայն էկրանավորվում է առաջին անգամ: Սյուժեի համաձայն՝ Երկիր մոլորակը վերածվում է հումանիստական ուտոպիաների մարմնավորման: Ոչ երկրային քաղաքակրթությունների հետ պայմանագրերի հանձնաժողովի ղեկավար Ռուդոլֆ Սիկորսկին (Լեոնիդ Յարմոլնիկ) հանձնարարում է Մաքսիմ Կամերերին (Յուրի Կոլոկոլնիկով)՝ գտնել Լեւ Աբալկինին (Մաքսիմ Մատվեեւ) ու նրա ղեկավարած գիտահետազոտական խմբի անդամներին, որոնք զոհվել են «Հույս» անվանումը կրող մոլորակի վրա՝ հրեշավոր գիտական փորձարկման հետեւանքով, որն անցկացվել է այնտեղի Ճամփորդների գերքաղաքակրթության հետ: Նրանց հետ շփումներից հետո Աբալկինը սպանում է գործընկերոջն ու թռչում հետ՝ դեպի Երկիր մոլորակ, որպեսզի նույնպիսի մի գործընթաց սկսի, որը ոչնչացրել է «Հույս» մոլորակը: Կամերերին հաջողվում է գտնել Աբալկինի հետքը, սակայն վերջինս միշտ կարողանում է Կամերերից մեկ քայլ առաջ անցնել: «Կեսօրի» նկարահանումներն ընթացել են Մոսկվայի տարբեր հատվածներում եւ «Մոսկինոյի» գործարանում:

Նկարահանումների իրականացմանն օգնել է Մոսկովյան հանձնախումբը: Կինոգործարանում նկարահանումների համար կառուցել են Ռուդոլֆ Սիկորսկու աշխատասենյակը՝ մի քանի բարդ դեկորացիաների համադրումով, որտեղ միավորված են թե՛ ֆիզիկական, թե՛ թվային տարածության վիրտուալ դեկորացիաների էլեմենտները: Սեւ անապատը, ստալակտիտ քարերի պարտեզը, մալախիտե բուրգը եւ միջնաբերդն այն հիմնական վայրերն են, որտեղ ֆիզիկական կոնստրուկցիաներն ու «ԼԵԴ» էկրանները մի ամբողջ աշխարհ են ստեղծել: «Կինոգործարանը մեզ համար դարձել է այն բազմաֆունկցիոնալ հարթակը, որտեղ իրականացվել է նկարահանման գործընթացը՝ առավելագույն հարմարավետությամբ: Ընդարձակ տաղավարները թույլ են տալիս նկարահանումներն այնպես կազմակերպել, որ աշխատանքը հարթակում ընթանա տեխնիկական առումով չափազանց կոմֆորտ կերպով»,- kinoreporter-ի փոխանցմամբ՝ ասել է սերիալի բեմադրիչ-օպերատոր Հենրիխ Մեդերը:

Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ԱԼԱՀՇՈՒՔՅՈՒՐ ՓԱՇԱՅԱԴԵԻ ՆԱՄԱԿԸ ՎՈՎԱՅԻ ՈՐԴԻ ՆԻԿՈԼԻՆ

«Ձերդ ազնվածնություն Նիկոլ Վովազադե:

Ձեր կրոնավորները բարեւի տեղ էլ չեն թողնում, թե մի բարեւ ուղարկեմ անձամբ քեզ: Ինչքան էլ դուք ասեք՝ բարեւն Աստունն է: Նորանոր նենգ, սադրիչ լուրեր ենք ստանում պատմական Ազերբայջանի մաս կազմող ՈՒՉՄԻԱԾՆԻՑ: Դրանք մեզ՝ ժողովրդավարական համբավ ունեցող ազերբայջանցիներիս, անհանգստացնում են: Առանց չափազանցության՝ չափազանց:

Մի լավ ծանրութեթեւ արեք, ոնց կարելի է թույլատրել, որ Ուչմիածնի եւ Կիլիկիո կաթողիկոսարանները դավադիր նպատակներ որդեգրեն: Օդում պտտվող հաստատված լուրերի համաձայն, նրանք նպատակ են դրել այլ ժողովուրդների, ավելի ճիշտ՝ ազերբայջանցիներիս, ազգային վսեմ արժեքները սեփականացնել եւ թշնամանքի ու առճակատման թեզեր են քարոզում: Միջազգային ոչ մի պայմանագիր հաշվի չեք առնում, անտեսում եք մեր հզոր երկրի ղեկավար, քո մեծ ախպեր Իլհամ Ալիեւին տված խորնարհ խոստումներդ: Չի կարելի, վերջապես:

Մեզ ստույգ տեղեկություններ են հասել, որ հայկական եկեղեցին նենգադավ մի ծրագիր է փայփայում, ըստ որի՝ երբ շուտով (գաղտնի հիշեցնեմ՝ հստակ պայմանավորվածություն կա) դադարի հայկական պետականության գոյությունը, փորձելու են պահել Վատիկանի կարգավիճակի նման մի կարգավիճակ... Միթե քնած եք, միթե կարելի է թույլ տալ, որ մեր պատմական հողերի վրա պահպանվի իշխանության հետ չնչին իսկ կապ ունեցող որեւէ կարգավիճակ...

Իմացեք, այ տղա, խելքդ գլուխդ հավաքի, քանի դեռ ուշ չէ: Ալիեւն ու ազգս դա թույլ տալ չեն կարող: Հետո չասես՝ չզգուշացրիք:

Խոնարհությանդ վստահ՝ ԱԼԱՀՇՈՒՔՅՈՒՐ ՓԱՇԱՅԱԴԵ»

Կասկածում եք նման նամակի իսկությանը: Ադրբեջանի գլխավոր հոգեւորի արտահայտած այս սկանդալային միտքը, որ ղազիների հերթական նիստում օրերս է «կաթեցրել»՝ հուզված-զայրացած, եթե նամակ չէ, հապա ինչ է: Գուցե խաբեբա է: Հետաքրքիր է, խաբարը չի՞ լսել մեր ամենահաս, ամենակարող «առաջնորդը», եթե լսել է, ապա ինչ է պատասխանել: Հաստատ՝ «պորտը տեղն է դրել»: Ոչ, ոչ՝ Ալահշուքյուրի: Նա հարահոս ռեժիմով մեր պորտն է տեղը դնում: Եթե այդպես չէ, ապա կասեք, թե ինչու է ավելի կատաղի դարձրել արշավը մեր եկեղեցու ու եկեղեցականների հանդեպ: Ավելի պարզ էլ ինչ անի, ավելի ակնառու էլ ինչ ասի: Մարդն անում է այն, ինչը որ հանձնարարված է, մարդը խաղաղության մունետիկ է, խաղաղություն է բերում... Երկիրը ծախելու միջոցով ու գնով:

Չփորձեք «միամիտ» լրագրողուհու նման հարց ուղղել իմաստնության ակունքին, խաղաղության խաչմերուկի հերոս ճարտարապետին, ինչպիսի հարց տվել էր Էլինար Վարդանյանը ՔՊ-ի արքունիքից հերթական առանձնյակին՝ Սիսակ Գաբրիելյան անվամբ. «Դուք՝ թավշախմբի անդամներդ, հասկանում եք, որ մի օր ձեր արածների համար ձեր ետեւից գալու են պատասխան պահանջելու»: Գիտեք, թե ինչ է պատասխանել սույն քըպպըլոն: Ինքներդ էլ հասկանում եք, որ խելքը գլխին պատասխան չէր լինելու: Բայց այն, ինչ ասել է, վեր է ամեն-ամեն պատկերացումից: Պատասխանել է. «Եթե պետություն մնա, թող որ գան»:

Այո, ամեն շարքային ուսապարկի հայտնի է, որ ծրագրված գնում ենք երկրի կործանման, պետականության կորստի ճանապարհով: Իսկ վարչապետի աթոռին սոսնձված գլխավոր ուսապարկը մեզ հավատացնում է, թե խաղաղություն է բերում: Մենք ճրբ վերջապես պիտի հասկանանք, որ թուրքերը չեն հարձակվում, քանի դեռ առանց հարձակվել տալիս ենք, եւ չեն սպանում, քանի դեռ ինքնասպանվում ենք:

Մի փաստ էլ. ամեն աղետ չէ, որ գալիս է թշնամու սրով, կործանարար աղետները բերում են անտերունչ երկրի պատուհաս առաջնորդները եւ այն մթնազանգվածը, որ իր ընտրությամբ բերել է ազգադավներին ու մինչ օրս հլու-հնազանդ կրում է իր ուսերին:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Չեն վստահում Պուտինին

ՆԱՏՕ-ի եվրոպական դաշնակիցները կասկածում են, որ ԱՄՆ-ին կհաջողվի հասնել Ուկրաինայում խաղաղության: Ահա ինչու այլընտրանքային պլան են մշակել այն դեպքի համար, եթե ԱՄՆ-ին չհաջողվի հասնել ռուս-ուկրաինական հակամարտության կարգավորման: Համաձայն արեւմտյան մամուլում տեղ գտած հրապարակումների, ՆԱՏՕ-ի եվրոպական դաշնակիցները կասկածում են, որ Վլադիմիր Պուտինն այժմ ընթացող կարգավորման բանակցություններում կառուցողական դիրքորոշում կունենա: Նրանք վստահ են, որ ՌԴ-ն, ուժգնացնելով հարվածներն Ուկրաինայի էներգետիկ ու քաղաքացիական ենթակառուցվածքների վրա, հասկացնում է, որ մտադիր չէ նահանջել հայտարարած դիրքերից: Հատկապես որ ուկրաինական ներկայիս կարգավորման բանակցություններում եվրոպացիների տեսակետները առավել կամ պակաս չափով առկա են, թեեւ ֆիզիկապես Մոսկվայի հետ այդ բանակցություններում ԵՄ-ն ներկա չէ:

Ռուս-ուկրաինական հակամարտության կարգավորման այլընտրանքային պլանի հիմքում հետեւյալ սկզբունքներն են.

- Ուկրաինային տրամադրվող սպառազինությունների ավելացում
- Ուկրաինական տնտեսությանը ծավալուն աջակցության ցուցաբերում
- Ռուսաստանի դեմ գործող սանկցիաների ուժեղացում:

Եվրոպայում հավատացած են, որ ԱՄՆ-ի կողմից ընթացող՝ հակամարտության կարգավորման բանակցությունները ձախողվելու են բացառապես այն պատճառով, որ ՌԴ-ն չի զիջելու, եւ Մոսկվան պատրաստ է միայն ընդունելու Ուկրաինայի լիակատար կապիտուլյացիան:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am

Ստորագրված է տպագրության 5.12.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՂԹԵԼՈՒ Է ՈՒ ԱՅՍ ՊԱՅՔԱՐԻՑ ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂԱՑԱԾ Է ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ

Հարկե, հասկանալի է, որ Հայ առաքելական եկեղեցին ոչ թե անցյալի, այլ ապագայի կառույց պետք է լինի: Հասկանալի է նաեւ, որ հայկական միջավայրում եկեղեցու կառուցվածքի ու գործունեության ցանկացած լավարկում հենց այդ ծիրում ու այդ տրամաբանությամբ պետք է ընթանա:

Սակայն այդքանը հասկանալով հանդերձ, հասկանում ենք նաեւ, որ այնքան, ինչքան Նիկոլի այսօրվա արածները եկեղեցին ապագայի կառույց դարձնելու մասին չեն, նույնքան էլ՝ եկեղեցուն պաշտպանելու ընդդիմության այսօրվա գործելակերպը եկեղեցի պաշտպանելուն չի նմանվում:

Չի նմանվում, որովհետեւ ինչպես Նիկոլի նախաձեռնությունների շարժիչը եկեղեցին ապագայի կառույց չդարձնելն է, այնպես էլ եկեղեցին պաշտպանելու ընդդիմության մոտիվացիան եկեղեցու հեղինակությունն ու կարողությունները ներքաղաքական պայքարում իր օգտին օգտագործելն է: Այնինչ այնքան, ինչքան ՀԱԵ-ի այսօրվա խնդիրը ներքաղաքական պայքարի դերակատար ու մաս դառնալը չէ, նույնքան էլ ընդդիմության խնդիրը ներքաղաքական կյանքում իշխանությունների սանձարձակությունների դեմ պայքարելու իր պարտականությունը ՀԱԵ-ի վրա դնելը չէ:

Ավելին, ինչքան Նիկոլը պետք է հասկանա, որ կարգազանց եկեղեցականներով ու անօրինական պատարագներ կազմակերպելով ինքը չի հաղթելու եկեղեցուն, նույնքան էլ ընդդիմությունը պետք է իմանա, որ մանիպուլյատիվ ինտրիգներով ու ներքաղաքական աճպարարություններով չի կարողանա ՀԱԵ-ն ներքաղաքական պայքարի մեջ ներքաշել, չի կարողանա նրանով իր ներքաղաքական պայքարը սպասարկել:

Այս առումով, ՀԱԵ-ի դեմ պայքարում Նիկոլը պետք է պարտվի ու կպարտվի: Կպարտվի, որովհետեւ եկեղեցու դեմ նրա ձեռնարկները ոչ թե եկեղեցին ապագայի կառույց, այլ իր կամակատարը դարձնելու համար են: Կպարտվի, որովհետեւ ժողովուրդը նիկոլական կարգազանց պատարագներին իր չմասնակցությամբ ապացուցեց, որ ինքը չի պատրաստվում երկրի այսօրվա իշխանության անխոհեմ գործելակերպի ու առանձին հոգեւորականների անբարո ու դատապարտելի վարքի համար հրաժարվել իր հավատքից ու 1700-ամյա իր եկեղեցուց:

Այս իմաստով, ինչպես Նիկոլը, այնպես էլ այս ընդդիմությունը պետք է հասկանան, որ ՀԱԵ-ի դեմ Նիկոլի սանձազերծած ու օրվա ընդդիմության կողմից ամեն օր շահարկվող այս պայքարում Հայ առաքելական եկեղեցին հաղթելու է ու այս պայքարից ավելի ուժեղ ու ավելի ամրացած է դուրս գալու:

Բայց ինչպես նրանք, այնպես էլ առանձին եկեղեցական շրջանակներ պետք է իմանան նաեւ, որ եկեղեցին այդ պայքարում ոչ միայն Փաշինյան Նիկոլին, այլ նաեւ ինքն իրեն պետք է հաղթի եւ հենց ինքն իր հանդեպ տարած այդ հաղթանակի շնորհիվ էլ ավելի ամրացած ու ավելի ուժեղ պիտի դառնա: Որովհետեւ ինքն իրեն հաղթելու այդ պայքարում նա դասալիք քահանաներից ու եպիսկոպոսներից է ազատվելու, որովհետեւ այդ հաղթանակը ոչ թե ընդդիմության պաշտպանության, այլ հայ ժողովրդի ու Հայաստանի Հանրապետության քաղաքացու լայնախոհության եւ ՀԱԵ հազարամյա իմաստնության շնորհիվ է արձանագրելու:

Իսկ որ այդպես է լինելու, դրանում արդեն ոչ Նիկոլը, ոչ ընդդիմությունը եւ ոչ էլ եկեղեցու վերը նշված շրջանակները չպետք է կասկածներ ունենան:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Կորել է

ՀՀ քաղաքացի Ռիթա Գրիգորի Ազատյանին Երեւանի Հայբուսակ համալսարանի Պետական քննական հանձնաժողովի 2021թ.-ի հուլիսի 2-ի որոշմամբ տրված թիվ AD No 096993 դիպլոմը, որով նրան շնորհված է բժշկի որակավորում՝ «Բուժական գործ» մասնագիտությամբ: Խնդրում եմ համարել անվավեր:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am